



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԴ. Տարի - ՅՈՒՆԻՍ 1938



14^{me} Année - Juin 1938



ԽՐԱԳՐԱԿԱՆ — Հոգեգալուստին արժեքները.	Զ. Բ. Պուտաքեան
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Այս մէկ բանը	Թրգմ. Ն. Մ.
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Երկինք մեկնող երեք ճամբորդներ եւս	Վեր. Ժ. Կ. Պ.
Մէկշաբթիի կարեւորութիւնը.	Յովսէփ Թ. Պէրպէրեան
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Կ'ուզենք Յիսուսը տեսնել, Ապառաժը կոտորող մուրճը, Մ'եղքի հա- մոզման տակ, Բուլորդ ալ եկէք, Տէրոջը յանձնէ քու ճամբադ	Հաւաքից՝ Վեր. Ժ. Կ. Պ.
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Անհատ հաւատացեալը եկեղեցիին մէջ.	Scotfieldէն
ԵՐՋԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Չար ժամանակներ	Արմէն Շահպաղեան
Մահէս Վերջը.	Բրոֆ. Յ. ձէնսնեան
ՊԱՏԱՆԵԱՅ — Սամուէլ Մորիս	Թրգմ. Գ. Պարսամեան
ՄԱՆԿԱՆՅ — Մանկական Աղօթք.	Սիսակ Գալայեան
ՉՍՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ	Վեր. Ժ. Կ. Պ.
ԵՐԳ — Բիշ մըն ալ	Յ. Ն. Ղ.



ԲԱՆԲԵՐ՝ հոգեւոր ամսաթերթը թէւ. ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու, պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնակիչ Տշմարտութեան
ներկայացուցիչն ալ ջանքնար ու եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով՝ (կողքէն զատ
անոր խմբագրական մարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ,
ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԱՆԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԱՀԱՄԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ բլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապալու համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի օգոստոսի
եւ կը վերջանայ դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տուար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱՆ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:

Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:


Յօդուածները կուտակու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանալով դրամական առաքումի ուղթիւ հաճեցէք մանալին վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արձնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր ցանգիսար մտնելու խոստումըքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1938

ԹԻԻ 6



ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ

ՊԵՆՏԵԿՈՍՏԷՆ, հրէական տօն մըն էր որ կը
կատարուէր Զատիկէն 50 օր ետքը: Այդ
առթիւ կը տօնուէր երախայից տօնը, և կը յիշա-
տակուէր Սինայի վրայ, օրէնքին Մովսէսի
տրուիլը: Բարեպաշտ և օրէնքի նախանձախնդիր
ժողովուրդը մօտէն և հեռուէն Երուսաղէմ կը
փութար մասնակցելու այդ կարեւոր տօնախմբու-
թեանց:

Այդ առթիւ էր որ տեղի ունեցաւ Հոգեգա-
լուստը Գծք. Բ.ի պատմած զարմանալի եղանա-
կաւ: Հոն ի յայտ եկած զօրութիւնները ո՛չ ան-
խմաստ են, ո՛չ ալ աւելորդ: Հոգեգալուստը մեծա-
զոյն տնտեսութիւնը կը բանայ, քանի որ անով
կսկսի շնորհաց դարը և կը հիմնուի եկեղեցին:

Հոգեգալուստը ամրապէս կապուած է թէ
Քրիստոսի փառքին, թէ եկեղեցիին թէ ալ սրբոց:
Ջանանք այս երբեակ ուղղութեամբ տեսնել
անոր դերն ու իմաստը:

..

Հոգեգալուստը եւ Տէր Յիսուս Քրիստոս

1. Համբարձումը Քրիստոսը կը բազմեցնէ
Աստուծոյ Աթոռին վրայ ու զԱյն կ'ընէ հզօր
Արքայ, որուն տրուած է «ամեն իշխանութիւն»,
Հոգեգալուստը սակայն, կ'ամրացնէ Համբարձման
արժէքը, քանզի յաւելուածային լոյս մը կը նետէ
անոր վրայ: Ան ցոյց կուտայ որ Համբարձեալը
զօրեղապէս ճեղքած էր միջոցը ու «յաւիտենա-
կան դռներէն» ներս՝ հասած էր Հօրը Աթոռին: Իր
այդ գերիշխանութեան շնորհիւ էր որ Քրիստոս

պիտի կարենար կատարել իր աշակերտաց տուած
բոլոր խոստումները:

2. Մարգարէութեանց մէջ, կը խօսուի փառ-
քի, շնորհքի և լոյսի շրջանի մը մասին: (Եսայ.
44 : 3, Եզեկ : 36. 25—27, Յովել. 2 : 28—29) կը
յիշուի այն շրջանը երբ սրտերը նոր ջուրով
պիտի լուացուին, ու նոր հոգի մը պիտի թափուի
մարդոց վրայ, և ուր Աստուած մնայուն կերպով
պիտի բնակի իր ժողովուրդին մէջ: Մարգարէ-
ները աւետեցին այս տնտեսութիւնը, անոր ախ՛ը
քաշեցին և անցան առանց անոր հասնելու: Շի-
տակ է որ իրենց օրերուն ալ կար Ս. Հոգին,
բայց Անոր գործը և ներկայութիւնը պարբերա-
կան և սահմանափակ էր: Նաեւ որոշ գործի, ա-
տենուայ և մարդոց տրուած էր, այս պատճառաւ
ալ այս ծարաւը միշտ կայ բոլոր Հ. Կ.ի մէջ:

3. Քրիստոս, երբ եկաւ, Անոր կատարեալ
Մարգկութեան իբր Պսակ, և զԱյն օծելու համար
Իր թագաւորի, Քահանայի և Մարգարէի, երբեակ
պաշտօններուն հետ, Հայրը, Որդւոյն մէջ մարմ-
նաւորեց (և կը կարծեմ սահմանափակեց) Ս
Հոգւոյն անչափ և անբաժանելի լեցունութիւնը,
Քրիստոսի մկրտութեան առթիւ: Իսկ Նա, Իր
բաժնուելէն առաջ խոստացաւ «Հօրը աղաչել որ
ոգրիչ մխիթարիչ մը զրկէ» (Յովհ. 14 : 16) և
վատահեցուց որ Ս. Հոգին Իր Անունովը Հօրմէն
պիտի զրկուէր (26) այս պատճառաւ ալ աշակեր-
տաց ապսպրեց որ «Երուսաղէմէն չհեռանան»
Գծք. 1 : 4 եւ գործի չսկսին առանց Հոգւոյն
մկրտութեան:

Այս հիման վրայ էր որ եղաւ Հոգեգալուստը: Որդին կ'երթայ գերիշխանութեան տեղը: Անոր «կատարած» գործին փոխան հայրը, Որդին խնդրանքին վրայ եկեղեցիին կը դրկէ այն Սբ. Հոգին որուն մասին մարգարէները գրած էին և զոր Յիսուս խոստացած էր: Այսպէս Հոգեգալուստը ինքնին, նոր լոյս և փառք կը նետէր յարուցեալ և համբարձեալ Փրկչին վրայ:

Հոգեգալուստը եւ եկեղեցին

1. Բայց նաեւ կը հիմնուի եկեղեցին: Ս. Հոգին իջաւ վերնատան մէջ հաւաքուած 120ին վրայ մեծ ուժով և նշաններով: Բոլոր ներկաները վայելեցին զԱյն հաւասար գորութեամբ: Այս մկրտութիւնը մնայուն էր և պիտի շարունակուի մնալ, մինչեւ եկեղեցիին յափշտակութիւնը: Պենտեկոստէին օրը ամեն սիրտ ընդունեց զԱյն և այդ խումբը կազմեց Տէրոջը հոգեւոր տաճարը, Աստուծոյ Տունը, եկեղեցին: Յետ այնու մերժումը էր Բարայէլ ժամանակի մը համար: Երկրի վրայ Աստուծոյ ժողովուրդը և գործիքը եկեղեցին էր:

2. Եկեղեցիին այս առաջին մասը հրեաներէն բաղկացած էր, եւ Աստուած էր որ պիտի աճեցնէր անոնց աննշան թիւը, Իր ձեռքովը անոր աւելցնելով բոլոր անոնք որոնք նոյն հոգին կ'ընդունէին: Սակայն քիչ յետոյ, հեթանոսներն ալ, Քրիստոսի շնորհքովը եւ իրենց հաւատքովը հաղորդ եղան հոգւոյն, նմանօրինակ այցելութեանց եւ միացան եկեղեցիին: Այլամերժ ազգերէ բաղկացած այդ նոր մարմինը մէկ էր: Այսօր ալ մէկ է: Մարդիկ իրենց նեղմտութեամբ, չարութեամբ, մոլեռանդութեամբ եւ կամ երբեմն ստիպեալ, իրական հոգեւոր նախանձով կամայ կամ ակամայ կրնան շինել յարանուանական պատեր ու խորհիլ որ կրնան եկեղեցին դնել հոս և հոն, և անոր կցել իրենց սիրած էթիքէթը: Սակայն բաւը այդպէս չէ Աստուծոյ առջեւ: Բոլոր անոնք որ հիմնուած են Քրիստոսի վրայ, և ունին նոյն Տէրը և ծնած են ու կ'ապրին մէկ հոգիէն, եղբայր են և Մէկ Մարմին ի Տէր Յիսուս Քրիստոս, և իրենց զանազանութեան մէջ իսկ են նոյն Մարմնին անդամները: Երբ կը մեռնին կ'ազատին յարանուանական կապերէն: Երբ Քրիստոս նորէն գայ, իրենները ամեն տեղէ պիտի լսեն փողին ձայնը նոյն փրկչին քով ժողովուրդելու համար:

3. Հոգեգալուստը նաեւ եկեղեցիին մէջ կենաց բոց է: Զի Տէր Յիսուս, Անով մարդոց կը դրկէ

այն հոգին որուն մէջ ապրեցաւ Իր վսեմ և բեղուն կեանքը:

Մեղքը վշտացուցած էր Ս. Հոգին ու նա քաշուած էր մարդէն եւ ալ չէր կենդանացներ զայն: Սակայն Քրիստոսի գերիշխանութիւնը ընդունողներուն Տէրը ետ կը բերէ Աստուծոյ հոգին որ կը գործէ իբր՝

ա) Աստուծոյ գիտութեան հոգին, որ կը պարունակէ հոգեւոր լոյս, Աստուծոյ հետ մտերմութիւն եւ հանապազօր առաջնորդութիւն:

բ) Աստուծոյ կեանքին հոգին, որ մեզ կը տանի արդարութեան, ճշմարտութեան եւ սրբութեան:

գ) Աստուծոյ ուժին հոգին, որ մեզ կը պարգեւէ ամեն կերպ յաղթութիւն, յառաջիադացում եւ պտղաբերութիւն:

Այս կերպով եկեղեցին ետ կ'ստանայ այն էական զանձերը, որոնք աւա՛ղ, այնքան դարիւր մնացին «դրախտի կորուսեալ»ի մէջ:

Հոգեգալուստը եւ հաւատացեալը

Ս. Հոգին արդէն մտերմօրէն կապուած է այն անհատին որ Քրիստոսի կուգայ: Արդարեւ մեղքի համար զղջալը, Քրիստոսի վստահիլը, գիտնալը թէ Աստուած զիւք ընդունած է իբր որդի, իր կնքուիլը փրկութեան օրուան համար, Ս. Հոգւոյն գործերն են, մէկը բնաւ ինքնիրեն չէ որ կ'ապաշխարէ եւ խղճի խաղաղութիւն կ'ստանայ:

2. Սակայն վկայութեան և ծառայութեան համար մեծ է Ս. Հոգւոյն մկրտութեան արժէքը: Առաջ Ան մեր մէջ գործեց եւ հետեւանքը եղաւ փրկութիւն: Դարձեալ պէտք է գործէ, ու մկրտէ, յարմարցնելու զմեզ Իր գործին: Իր գործութենէն բաժին մը կ'իյնայ մեզի: Հոգեւոր պարգեւներ, նշաններ, հրաշք: Քրիստոսի մէն մի հաւատացեալ իրաւունք եւ պարտականութիւն ունի բոլոր սրտով, յարատեւ աղօթքով եւ հաւատքով խնդրել Ս. Հոգւոյն այցելութիւնը որպէս զի կարենայ զինուած ըլլալ, կատարելու այն բոլորը որ Աստուած կրնայ ակնկալել իրմէն: Մեզի չ'իյնար շփոթիլ նախնարութեան հարցին մէջ: Միայն Աստուծոյ կը վերաբերի մեզի բաժին մը զրկել այն լեցունութենէն որ մնայուն կերպով մը շնորհուած է տիեզերական եկեղեցիին: Թէ մեզի ի՞նչ պարգեւ պէտք է, ի՞նչ չափով, եւ ե՞րբ տրուելու է եւն. կը վերաբերին Աստուծոյ լինքնակալ եւ ազատ շնորհքին: Ո՛չ ալ հնար է — այս կէտը մոռնալով — հսկումով և աղաչանքով ստիպել Տէրը մեր ուզածը շնորհելու: Այս սխա-

լին անձնատուր եղողները կ'իյնան այլանդակ և մոլոր ուղղութեանց և փորձառութեանց մէջ, որոնք դժբաղդաբար փնասաբեր են և յուսախաբ կ'ընեն թէեւ դիւրաւ կը կոչուին «Ս. Հոգւոյն մկրտութեան, պարգեւներու ստացում» են։

3. Տակաւին ամեն հաւատացեալի իրաւունքն է խնդրել իր ժառանգութիւնը, եւ նախանձախնդիր ըլլալ հոգեւոր, լաւագոյն պարգեւներու։ Առանց այս կարօտին և այցելութեան մեր կեանքը կը մնայ չոր, անգոր եւ անպտուղ։

Ես կը սիրեմ Eugène Burnandի այն պատկերը որ կը ներկայացնէ Ս. Հոգւոյն համար աղօթք ընող հաւատացեալ մը։ Բարեպաշտ կին մը, գլուխը իր միացեալ ձեռաց կռնցուցած, բաց Ս. Գրքի մը առջեւ, հիմնուելով Փրկչին պատուէրին վրայ, կ'աղօթէ Ս. Հոգւոյն մկրտութեան համար։ Իր դէմքին վրայ, իրական մըտամոփման մը հետ կարելի է գանազանել հանգարտ եւ վսեմ խաղաղութիւն մը, մինչ իր շրթներուն կորովի գիծը կ'արտայայտէ հաւատք եւ յարատեւութիւն, ու իր ամուր միացեալ ձեռքերը կը պատմեն իր խոր տենչանքը։

Աղօթող քրիստոնեային պատկերն ըլլալու է ան։ Նորէն կարդանք Ղուկաս ԺԱ 5—13ը։ «Որչա՛փ աւելի ձեր Հայրը երկիրքէն Ս. Հոգին պիտի տայ անոնց որ Իրմէն կը խնդրեն»։ Հոգեգալուստը մեզի համար, իր արժէքէն շատ կորսնցուցած է, եթէ այս օրերուս, մենք այս դիրքին չենք հասեր։ Ուստի խնդրենք այս մասնաւոր օրհնութիւնը, և մեր կեանքն ու մեր գործերը տարբեր պիտի ըլլան։ Ան մեր մէջ պիտի բնակի և օր ըստ օրէ մեր շունչը, հոգին եւ մարմինը պիտի սրբացնէ ու կերտէ Յիսուս Քրիստոսի ուղածին պէս, մինչեւ որ օր մը մեզ բոլորովին նմանեցնէ Անոր։

••

Մեզի կը մնայ խուսափիլ արդելքներէ։

Մեր սրտերուն լաւ հսկենք, չարին տեղ չտալու որպէսզի չվշտանայ Ս. Հոգին։ Եփս. 4 : 30—31։

Մեր կեանքերուն լաւ հոգ տանինք որ չմարկնիք Ս. Հոգին թերահաւատութեամբ կամ անհնազանդութիւնով։

Այլ յաւէտ ծոխք Անոր հզօր ներգործութեան տակ, ու քալենք Անոր հետ մէկտեղ «զօրութենէ զօրութիւն»։

Յետադարձ քրիստոնեան, ուխտադրուծ հաւատացեալը եւ անապաշխար հոգին, կրնան նաեւ դէմ կենալ Ս. Հոգւոյն (Գոժք. 7 : 51) կրնան

անարգել զԱյն (Եբրք. 10 : 29) եւ կամ հայհոյել Անոր (Մատթ. 12 : 31)։ Այստեղ կը կենանք մահացու մեղքին զարհուրելի սահմանին առջեւ։ Այս մեղքը ընդհանրապէս կապուած է անձի մը, Քրիստոսի հանդէպ բռնած դիրքին։ ՉԱյն մերժելուն, Անոր չհնազանդելուն, Անոր չյուսալուն։

Ուստի, ինչպէս Ս. Հոգւոյն Օծման համար Ս. Հոգւոյն մաշող կրակէն ազատելու համար ալ դառնանք Տէր Յիսուս Քրիստոսի եւ խնդրենք զԱյն բոլոր ուժով, երկիւղած եւ անմահացնող կարօտով մը։

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ



ԱՅՍ ՄԷԿ ԲԱՆԸ

«Ոչ թէ ես արդէն առեր եմ»

Փիլ. Գ. 12, 14

Կար ժամանակ մը որ Պօղոս ինքզինքը անարատ նկատելէ հաճոյք կը զգար, սակայն այդ այն օրերուն էր որ Տէրոջը փառքը տակաւին իր վրայ ծագած չէր ու իր աչքերը դեռ յատակ չէին տեսներ։ Մաշած զգեստ մը կրնայ գեղեցիկ երեւնալ աղօտ լոյսի տակ։ Չմրան մութ եղանակին փառաւոր երեւցող կահ կարասիներ գարնան պայծառ արեգակին ճառագայթներուն տակ աղտոտ ու հին կ'երեւնան։ Պօղոս առաքեալ ապրած էր փարիսեցիական զաղափարներու մթնշաղին, երբ զաղտնի յանցանքներ ծածկուած կը մնային ու նոյն իսկ շնորհալի յատկութիւններ կը թուէին։ Սակայն «Աշխարհի լոյս»ին իրեն յայտնուէին ի վեր ամէն ինչ իրեն ճշմարիտ գոյնով կ'երեւնար ու առաքիւնութեան վերարկուն կրող երեւոյթներ, երեւան կուգային իբրեւ ինքնահաւանութեան մեղքեր։ Լոյսը ամէն բան յայտնի փ'ընէ։

Արդ՝ մեծ խոնարհութեամբ ու հանդարտութեամբ կը խօսի իր մասին, հեռու ամէն յաւակնութենէ ու մահացու ինքնախաբուծենէ։ «Ոչ թէ ես արդէն առեր եմ, Կամ արդէն կատարեալ եղեր եմ»։ Միմիայն քանի մը ծաղիկներ քաղած եմ ապագայ հայրենիքէս։ Կեանքիս մէջ հոս ու հոն պտուղներ գոյութեան կուգան, սակայն հասունցած չեն տակաւին։ Գոհութիւն Աստուծոյ որ խոստումներու հրաշալի կարելիութիւններ կան,

սակայն անոնց իրականացումը դեռ հեռու է ու ամենն էլ ընտիր բաները ապագային պիտի տեսնեմ:

«Հապա ետեւէ ինկած եմ»: Իր և իր իտէալին միջեւ տարածուող հեռաւորութիւնը անշարժութեան չմատնէր զինք: Չնստիր ու անկարողութեան դառն արտասուքներ թափէր, այլ ինչ սաստկութեամբ որ որսի շուն մը կը հալածէ իր գտած շաւիղը՝ Առաքեալը կը հալածէ իրեն յայտնուած փառքը: Չմոռնանք նաև թէ հոս խօսողը ծերացած Պօղոսն է: Սովորաբար կը խորհինք թէ ծերութեան միջոցին մարդիկ կը սկսին աւելի թեթեւ աշխատիլ, անոնց շահագրգռութիւնը հետզհետէ կը նուազի ու եռանդը իր ջերմութիւնը կը կորսնցնէ: Բայց հոս մեր առջեւ կը կենայ ալիսփառ զինուոր մը, որուն աչքերուն լոյսը աղօտած ու ֆիզիքական կորովը նուազած չէ, այլ պահած իր երիտասարդութեան հրաշալի եռանդն ու կորովը: Նոյնքան կորովամիտ ու բոլորանուէր կը հետապնդէ իրեն երեւցած լոյսը: Տէրը Իր ձեռքը անոր վրայ դնելով զայն ընտրած էր որպէսզի բարձր աստիճաններու և դիրքերու հասցնէր ու անիկա մտադիր է իր զօրութեան մինչև վերջին մասնիկը զործածելով իր Վարդապետին նպատակին հասնելու: «Ետեւէ ինկած եմ որ բռնեմ մրցանակը, որու համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ»:

«Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռնեմ եմ»: Քանի որ տակաւին կատարելութեան հասած չէ, հոն հասնելու կատարելութիւնը իր ստացուածքը չը սեպեր: Ձեռք չձգուած բան մը իրը սեպելը աւելի փնաս յառաջ կը բերէ քան շահ: Չուզէր այլեւս ըստ փարիսեցիական յիմար դատողութեան իր «անարատ» կեանքին վրայ պարծենալ: Յատկօրէն կը տեսնէ իր թերութիւնները, անդադար կը զգայ իր կարօտութիւնը ու չկրնար անտարբեր ու կեղծ անդորրութեան մը յանձնել ինքզինքը: «Բայց բան մը կայ»: (Անզլ. «Բայց բան մը կ'ընեմ»): Դիտէ թէ ինչպէս մեծ Առաքեալը իր բոլոր ուժերը կը կեդրոնացնէ մէկ նպատակի մը վրայ: Հակառակ անոր որ իր իտէալը տակաւին հեռու է, հակառակ անոր որ բարձրաբերձ գազաթը դեռ իրմէ շատ վեր կ'երենայ իր լուսաշող փառքով՝ չթուլատրեր որ իր ուժերը այլևայլ ջանքերու վրայ վատնուին, ոչ ալ կը նստի ու կ'ողորայ ապարդիւն աշխատութեան համար: Միայն մէկ նպատակի ու մէկ գործի կը նուիրէ ինքզինքը ու կ'որոշէ որ իր մարմնոյն իւրաքանչիւր անդամը ու ամբողջ կարողութիւնը բոլորովին այդ նպատակին հապ-


տակի: Ամէն բանէ գերադաս ըլլալու է իր կրօնական շահագրգռութիւնը և իւրաքանչիւր ստորագաս բաղձանք այս կեդրոնական հրավառ տենչին առաջնորդուելու է նման գետակներու, որ կը փութան իրենց ջինջ ու յստակ ջուրերը թափել մեծ ու փառաւոր գետի մը մէջ: Այս կեդրոնացման մէջ կը կայանայ Աստուծոյ բոլոր սուրբերուն կեանքին զարգացման զաղտնիքը: Անոնք միայն մէկ նպատակի համար կ'ապրին: Մեզմէ շատերու համար կրօնական կեանքը կարգ մը ուրիշ բաներէն մէկը կը ներկայացնէ: Ժամանակ մը ձեռք կ'առնենք զայն, յետոյ վար կը դնենք: Մէյ մը կրօնքի կարեւորութիւն կուտանք, մէյ մը չենք տար: Մէկէն ի մէկ կը խանդավառինք ու քիչ վերջը դարձեալ կը պաղինք: Ենթադրելով թէ ամէն բան իր ժամանակն ունի, երկնային հիւրը կը սպասեցնենք մեր սենեակներուն դռներուն առջև ու երբեմն նոյնիսկ տանը դռնէն դուրս՝ մինչև որ աւելի կարեւոր սեպուած գործ մը ի գլուխ հանենք: Բայց Պօղոս Առաքեալի համար ամենէն կարեւոր գործը կրօնքի խնդիրն էր: Անոր համար կեանքը ընդարձակ տաճար մըն էր ու ամէն առուստուր, ամէն արհեստ, ամէն բարեկամութիւն այս տաճարին մէկ մասը կը կազմէր և այս տաճարին հոգեւոր մթնոլորտով լեցուելու էր ամէն ինչ: Երբ անոր ձեռքերը վրանագործութեամբ կը զբաղէին, անոր հոգւոյն աչքերը սեւեռուած էին բարձրերը: Ամէն բանի մէջ անոր միակ սրբազան նպատակն էր հագուած ըլլալ իր Տէրոջը փառքով:

«Ետեւէ եղածները մոռցած եմ»: Անշուշտ մոռցած չէր իր մեղքերը, քանզի զանոնք յիշելով ու անոնց համար ցաւելով խոնարհ դիրքի մը մէջ կը մնար: Անտարակոյս կը յիշէր նաեւ իր սխալները, որ չըլլայ թէ զանոնք մոռնալով կրկին նոյն թերութիւններուն մէջ իյնալու դժբաղդութիւնն ունենար: Ուրեմն ի՞նչ է գոր մոռցած է: Ինծի կը թուի թէ անիկա կը ջանայ մոռնալ իր յաջողութիւնները: Յաջողութիւնը փարիսեցիի մը թակարդն էր: Փարիսեցիները փոքրիկ բարոյական յաղթութիւն մը տանելուն պէս՝ կը սկսէին շոյել ու փայփայել զայն, մինչև որ իրենց ձեռք բերած յաջողութեան գերիներն դառնալով յառաջ երթալէ կը դադրէին: Ձեռք բերուած յաջողութեամբ մը բաւականանալը յետադիմութեան առաջին քայլն է: Այն վայրկեանին որ յառաջ երթալէ կը դադրինք, կը սկսինք յետադիմել: Հոգեւոր կեանքին մէջ դադար առնել չկայ: Ուստի յառաջադէմ հոգեւորութեան առաջին պահանջն է կոնակ դարձնել արդէն

ձեռք բերուած յաջողութեան ու ետեւի եղս ծները մոռնալ: Ան ուր իր կեանքը կորսնցնէ, պիտի գտնէ զայն:

«Ու առջեւի եղածներուն կը դիմեմ»: Առաքեալը՝ հեռու անհոգութեամբ իր տարած յաղթանակներուն փարելէ, իր ամէն մէկ շիղն ու մկանը կը պրկէ նոր երկիրներ գրաւելու և բարձրագոյն տեղեր նուաճելու: «Նպատակը դիտելով»: Անգաղար նպատակին կը նայի: Երբէք չթողուր որ իր անձը հրապուրուի ճամբուն վրայ գտնուող գրաւիչ բաներէ: Անոր միակ հրապուրն է իրեն յայտնուած ցանկալի փառքը ու այս հրապուրը եռանդով կ'ոգեւորէ ու կ'արագցնէ անոր յօժարակամ ոտքերը: Ի՞նչ է այն նպատակը զոր Առաքեալը իր նկատողութեան ու խորհուրդներուն առարկան ըրած է: «Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեմ»: Անիկա չբաւականանար իր երեւակայութեան ծնունդն եղող իտէալով մը կամ մարդոցմէ առաջարկուած համաձայնութեամբ մը: Ո՞րչափ վեր կը կանչէ զիս Աստուած Քրիստոսով: Ի՞նչ կարելիութիւններ կը ներկայացնէ իմ Տէրս ինծի: Ի՞նչ փառաւոր վիճակի կ'առաջնորդէ զիս: Ահա իմ նպատակս, ահա իմ մրցանակս: Ուշադրութեամբ մտիկ պիտի ընեմ Փրկչիս ձայնին, որ Ալպեան փողի մը նման ականջիս կը հնչէ հրաշագեղ ու ձիւնազարդ կոյս բարձրութիւններէ:

Թարգմ. Ն. Մ.



1937 ը Լիօնի Հայ Աւետարանական փոքրիկ համայնքին համար մարդկօրէն խօսելով՝ ցաւալի տարի մը եղաւ, կրնանք ըսել թէ մահուան շուքին ձորին մէջէն անցանք: Տարին զրեթէ յուզարկաւորութեամբ սկսանք և յուզարկաւորութեամբ վերջացուցինք: Երբ Փետր. 10ին փոքրիկ Կրէյս Բաշալեանի մարմինը հողը յանձնեցինք, մեր մտքէն երբէք չէինք անցնել թէ տակաւին չորս հոգեւոր չափահաս քոյրեր անոր պիտի յաջորդէին: Ասոնցմէ միմ' Տիկ. Թադուհի Նլզովանեանն է որ 9 Մարտ 1937ին ի Տէր հանդեաւ, որուն վրայով հայերէն «Բանբեր»ի անցեալ տար-

ուայ Յուլիս Թիւին մէջ արդէն գրեցինք: Միւս երեքէն ժամանակի կարգաւ առաջինն է,

ԱՐՇԱՆՈՅՍ ՊԱՏԷՄԵԱՆ

Արշալոյս ծնաւ Մարտ 1898ին և կարճատեւ հիւանդութենէ մը վերջ իր շատ սիրած Փրկչին միացաւ 8 Մայիս 1937ին:

Իր մանկութեան տարիներէն ետք ընտանիք մը կազմելէն քիչ յետոյ մեծ պատերազմը վրայ կը հասնի և տարագրուելով մինչեւ Բազա կ'երթայ: Հոն թշուառութեան և անթութեան մատնուելով, տարագրուելէն զրեթէ տարի մը վերջ իր նորածին մանուկը կոնակը կապելով անկէ կը փախչի: Լեռներն ու ձորերը թափառելով վերջապէս մուրացկանի մը կերպարանքով Մարտ իր հօրը տունը կը հասնի: Ճամբորդութեանը ընթացքին չլթնները զինք կը բռնեն և դանակը կոկորդը կը դնեն, կտրելու: Սակայն հրաշալի կերպով մը կ'ազատուի: Տէրօջը շատ փառք կուտար որ իր կեանքը այն ատեն խնայած ու իրեն ապաշխարութեան պատեհութիւն տուած էր:

1920ին իր գաւազնը կը մեռնի և աժուսինը Մարաշի պատերազմին ֆրանսացիներուն հետ կը փախչի: Իր վիշտն ու նեղութիւնները զինք Տէրօջը կ'առաջնորդեն: Իր հոգերը և սիրտը Տէրօջը կը յանձնէ և այն օրէն սկսեալ Տէրօջով կ'ապրի:

Տեղահանութենէն վերջը Դամասկոս կուգայ բայց հոնտեղի ջարդէն յետոյ ալ Ֆրանսա եկաւ:

Արշալոյս քոյր ամէնը սիրող ու ամէնէն սիրուող, խոնարհ և աղօթասէր ու անմահ հոգիներու փրկութեանը համար սիրտը այրող և շատ աղօթող մէկն էր: Աստուծոյ խօսքը շատ կը կարգար և Յիսուսի գալուստին մեծ փափաքով կը սպասէր: Իրեն տունը այցելողներուն հետ հոգեւոր խօսակցութիւններ կ'ընէր:

Մահուանէ քանի մը շաբաթ առաջ, տակաւին անկողին չինկած իր ծերունի մօրը և քրոջը կ'ըսէ թէ մօտերս պիտի մեռնի և Յայտ. 14. 13ը կը խօսի: Երբ մայրը իրեն կ'ըսէ «Արշալոյս, իմ կարգս առնելով այս տարիքիս մէջ զիս ցաւերու ենթակայ մի ըներ», ինքը կ'ըսէ, «Է՛հ, պիտի տեսնես, բայց ինծի համար մի լաք, հապա անապաշխար և անյոյս մեռնողներուն համար լացէք»:

Իրեն վերջին երգած երգը, իր շատ սիրած երգին (Թէզ շու շէմս դուրուպ էտէր) կրկնեցը եղած է:

Պիրլէշիրիզ օրտա, ա՛հ, պիրլէշիրիզ օրտա,

Յիսուսըն սուրբթիւյէ պիւրէշիւրիզ պիզ օրտա,
Պիւրէշիւրիզ օրտա, ա՛հ, պիւրէշիւրիզ պիզ օրտա,
Վէ հրէրիզ ճէլալէ:

Արշալոյս քրոջ յաջորդեց, հոն անոր հետ
միանալու իր խնամին՝

ԱՐՈՒՍԵԱԿ ՇԱՀՊԱԶԵԱՆ

Արուսեակ ծնած է Կիւրին 1879ին և իր երկնա-
յին հանգիստը մտաւ 8 Սեպտ. 1937ին:

Նա տարազրութեան տառապալից տարիները
անցուցած է Այնթապի և շրջակայ գիւղերուն
մէջ, զաւակներէն երկուքին հետ մէկտեղ: Նաեւ
Այնթապի պատերազմին սկիզբը հոն գտնուած
է և այն սոսկալի օրերու վախերուն ինքն ալ
մասնակից եղած է: Բայց երբ ուրիշ քաղաքնե-
րէն եղողները ֆրանսական յետադարձ խումբին
(գոնուայ) հետ քաղաքէն մեկնելու արտօնուե-
ցան, ինքն ալ իր զաւակներով կ'ելլէ ու Պէյ-
րութ կ'երթայ և ատեն մը ետքը Ֆրանսա կը
փոխադրուի, նախ Պէլֆոր ու յետոյ Լիոն:

Նա թէպէտեւ հայրենիքի մէջ եկեղեցւոյ ան-
դամ կ'ըլլայ, բայց հոս Աւետարանին ճշմարտու-
թիւնները ու հոգեւոր կեանքը նոր լոյսով մը կը
տեսնէ և մահուանէն ութը տարի առաջ կ'ապաշ-
խարէ և վերջին տարիներուն աւելի նուիրուած
կեանքի մը կ'առաջնորդուի: Եօթը տարի է ի վեր
ֆիզիքական տկարութիւն ունէր, իր կրած նե-
ղութիւնները զինք Տէրոջը աւելի մօտեցուցին:

Մահուանէ քանի մը ամիս առաջ իր վրայ
կատարուած բժշկական քննութենէն յայտնի
եղաւ որ զանաւոր մը ունի: Նախ ատեն մը հիւան-
դանոց պառկեցաւ ու յետոյ տուն: Այս մահուան
անկողինն մէջ դառն ցաւեր ունեցաւ, սակայն
անոնց առանց տրտնջելու համբերութիւնով տո-
կաց և յաճախ «փառք Աստուծոյ, փառք Աստու-
ծոյ» կ'ըսէր:

Երբ որ հիւանդանոցն էր, մէկ այցելութեանս
առթիւ, խօսակցութեան ընթացքին երբ իրեն
Փրկչին հետ ունեցած յարաբերութեանը մասին
հարցուցի, իր ձեռքը սրտին վրայ դնելով ըսաւ,
«Յիսուս հոս գամուած է»: Ըսել ուզեց թէ Յիսուս
իր սիրտը զրաւած է և Ասիկա իրմէ ունէ մէկը
կամ բան մը չկրնար բաժնել: Ուրիշ անգամ մը
երբ տունը կը պառկէր և ես վազանձ երթալէս
առաջ զինք այցելեցի, ինծի ըսաւ «Եթէ մեռնիմ
պիտի գաս ու զիս թաղես»: Նաեւ փափաքեցաւ
որ այդ պարագային «Միւրելիներս եկէք» և «Եղուկ
եմ ես, ով Տէր, աղքատ» երգերը երգուին:

Ապա ինծի և գործիս համար բարեմաղթութիւն-
ներ ըրաւ ու բաժնուեցանք: Ասիկա երկրի վրայ
մեր վերջին տեսակցութիւնը եղաւ. թաղման
առթիւ իր փափաքը կատարուեցաւ:

Մահուանէ ամիս մը առաջ, երբ Ամերիկա
գտնուող զաւակին վրայ կը մտածէ ու կը ցաւի
թէ զինք այլեւս հոս պիտի չկրնայ տեսնել, ան
ատեն աղօթքի ձեւով կ'ըսէ «Այս աշխարհի մէջ
այլեւս զաւակս պիտի չտեսնեմ, բայց Տէրը զայն
իր փառքին արժանացնէ, որ զինք երկիրքի մէջ
տեսնեմ»: Յետոյ իր աղջկան դառնալով կ'ըսէ,
«Վերժին՝ Յարութիւնին գրէ և հարցուր թէ յա-
ւիտենական կեանքի համար ի՞նչ կը խորհի»: Աս
կ'ըսէ ու կուլայ եւ անկէ, «Ո՛հ, ո՛ւր մնաց
արդեօք այսօր, որդեակն իմ սիրական» երգը
արցունքով կ'երգէ ու ապա կ'ըսէ «Այս երգը Յա-
րութիւնին գրէ»: Այն ատեն աղջկաները իրեն
կ'ըսեն «Մայրիկ ինչո՞ւ կուլաս, Աստուած ամէն
բանի կարող է, դուն այդ մասին հոգ մի ընէր,
քանի որ զանոնք Աստուած ստեղծեց, դուն պէտք
չէ որ անոնց մասին խորհիս»: Նա կ'ըսէ «Ես
յոյսս Աստուծոյ վրայ դրած եմ»: Անկէ իր աչքե-
րը պատին վրայ «Յիսուս դառն առջեւը» պատ-
կերին վրայ կը դարձնէ ու կ'ըսէ «Պիտի գամ,
Քու քովդ պիտի գամ, մօտ օրէն»: Ապա զաւակ-
ներուն կը դառնայ ու խրատներ կուտայ և ան-
ապաշխար տղուն համար կուլայ ու կ'ըսէ, «Եթէ
նա ապաշխարելու չըլլայ, յաւիտեան պիտի կոր-
սուի»: Իրեն մեծ փափաքը իր զաւակներուն Տէ-
րոջը յանձնուիլը և իրեն համար ապրիլն էր:

Ուրիշ առթիւ իր զաւակներուն կ'ըսէ «Այս աշ-
խարհին ամէն բաները անցաւոր են, եթէ երկին-
քը ժառանգել կ'ուզէք, ձեր իրաւունքները մի
պաշտպանէք, հապա Տէրոջը ձգեցէք»: Օր մը
քանի մը քոյրեր երբ զինք կ'այցելեն, անոնց իր
վկայութիւնը կուտայ և կ'ըսէ, «Եթէ ուրիշներուն
խօսքերէն տակաւին կը նեղուիք և ձեր մէջ
եսութիւն կայ, աս կը ցուցնէ թէ տակաւին ձեր
մէջը հոգեւոր կեանք չկայ»: Նաեւ կ'ըսէ, «Իմ
մէջս ալ հպարտութիւն կար, բայց Տէրը ինձ
հասկցուց»:

Իր հայրենակիցներէն 95 տարեկան տիկին մը
երբ զինք այցելելու կուգայ, անոր կ'ըսէ «Մայ-
րիկ, դուն ձերացած ես, այս տարիքին հասած
ես, մեռնիսնէ ի՞նչ պիտի ըլլաս, ա՛լ ապաշխա-
րէ»: Այցելուներէն մէկուն կ'ըսէ «Չորս օրս մնաց
և չորս օր ետքը հոգին այս տկար մարմինը եւ
տառապանաց մշխարհը ձգելով իր երկնային
հանգիստը կը մտնէ: Արուսեակ քրոջը յաջորդեց

ՄԱՐԻԱՄ ՔԵՇԻՇԵԱՆ

Մարիամ ծնաւ Մարաշ 1875ին և իր ընթացքը կատարեց 30 Դեկտ. 1937ին:

Այս քույր մահը բոլորովին անակնկալ մահ մըն էր: Նա Նիս ճամբորդելու համար կայարանը կը գտնուէր ու հոն գիշերուան ժամը 11.30ին յանկարծամահ եղաւ:

Հանգուցեալը մօտաւորապէս տասը տարիէ ի վեր սրտի տկարութիւն ունէր, սակայն վերջին տարիներուն աւելի տկարացած էր և յաճախ կը տառապէր ու գրեթէ տունէն դուրս չէր կրնար ելլել: Իր անդրանիկ դուստրը Սէլիմէ քոյր (Յարութիւն եղբայր Քէշիշեանի տիկինը) հիւանդ էր և Լիոնի կլիման խոնաւ ըլլալուն, իրեն հիւանդութեանը աննպաստ էր, ուստի որոշեցին որ տունով Նիս փոխադրուին, Նիսի պայծառ և տաք ու օդը երկուքին համար ալ նպաստաւոր ըլլալու յոյսովը:

Տունէն չմեկնած ընտանեկան պաշտամունք կ'ունենան և աղօթքը Մարիամ քոյր ինքը կ'ընէ և այսպէս կ'աղօթէ. «Ով Տէր, ես որ ապաշխարած եմ (մօտաւորապէս 30 տարի առաջ) այս բաժանման պահուն (փեսան Յարութիւն եղբայր և միւս աղջիկը տիկին Ջէքիյէ և իր ընտանիքը հոս կը մնային) ինքզինքս Քեզի կրկին կը յանձնեմ, անցեալի մէջ ինչ թերութիւններ որ ունեցած եմ, ինծի ներէ»: Աղօթքին մէջ մօտ և հեռու գտնուող զաւակներուն համար ալ կ'աղօթէ եւ ճամբորդութեան համար ալ Աստուծոյ օգնութիւնն ու հովանաւորութիւնը կը խնդրէ:

Աղօթքէն քիչ յետոյ, տակաւին ճամբայ չելած սիրտը անհանգիստ ըլլալու կը սկսի, մինչդեռ վերջին երկու օրերուն ոչ միայն հանգիստ էր, հապա նաև ուրախութիւնով ճամբու համար կարգ մը պատրաստութիւններով ալ զբաղած էր: Սակայն քիչ յետոյ նորէն կը հանգստանայ և ինքնաշարժով կայարան կ'երթան: Հոն սպասելու սրահին մէջ, մինչ շոգեկառքին կը սպասեն, նորէն անհանգիստ կ'ըլլայ, իր դեղը կուտան եւ կրկին կը հանգստանայ ու մէկ ու կէս ժամ հոն տաքուկ տեղը կը հանգչի և վրան քրտինք մը կուգայ նա կ'ըսէ «Երանի թէ կառախումբը առաջին գծին վրայ դար, այն ատեն առանց դժուարութիւն քաշելու կը նստէի»: Սակայն կառախումբը երկրորդ գծին վրայ պիտի դար: Երբ շոգեկառքին հասնելու ատենը կը մօտենայ, փեռան Պ. Գալուստ Պօյաճեան իր թեւը կը մտնէ և առանց ստորերկրեայ երկայն ճամբայէն տանելու, ուղղակի գծին վրայէն երկրորդ գիծը կը

տանի: Դիմէն անցած պահուն իրեն կ'ըսեն «Մահա, ի՞նչպէս ես», նա կ'ըսէ, «Այս ճամբան ինծի համար դժուար է, բայց Քրիստոսի ոյժովը կ'երթամ»:

Նիսի թրէնը կայարանը կը հասնի և ընտանիքին միւս անդամները մինչ անոր մէջ մտնելու կ'աճապարեն՝ Մարիամ քոյր յանկարծամահ կ'ըլլայ ու իր փեսային թեւէն վար կը կախուի: Ճիշդ այդ պահուն՝ Տէրը զայն փոխանակ Նիսի թրէնին, իր անտեսանելի թրէնին մէջ կը մտնէ և Նիսի տեղ փառաց երկիրը, երկնային հանգիստը կը տանի, որպէսզի հոն կարենայ կատարելապէս հանգչիլ, այս տկար մարմինը մերկանալով:

Անոր մահը ոչ միայն իր սիրելիներուն, հապա զինք բոլոր ճանչցողներուն մեծ ցաւ պատճառեց: Այս մահուն յանկարծակի և անակնկալ պարագայի մը տակ ու տարուան գրեթէ վերջին օրուն մէջ ըլլալը, լսողներուն վրայ մեծ ազդեցութիւն թողուց: Ամալվերջի անխօս քարոզ մ'էր: «Յիրաւի մարդը ստուերի մը պէս կը պտըտի» Սաղ. Լթ 6:

Նա անկեղծ և խոնարհ հաւատացեալ մըն էր և իր անապաշխար սիրելիներուն փրկութեանը շատ փափաքող և եռանդով աղօթող էր:

Մենք այս սիրելի քոյրերուն մեզմէ բաժնուելուն թէպէտեւ շատ կը ցաւինք, բայց միւս կողմէն շատ ուրախ ենք որ անոնք Տէրոջը զաւակներն էին և իրենց ընթացքը կատարելով այս տառապանաց աշխարհէն երջանիկ երկիրը փոխադրուեցան, իրենց սիրելի Փրկչին ու սուրբերուն հետ միացան և հոն մեզի կը սպասեն անհամբեր: Տէրը շնորհէ որ անոնց բոլոր սիրելիները և մենք ալ հաւատքով կատարենք մեր ընթացքը և մինչ այդ՝ ժամանակը ծախու առնելով հաւատարմաբար ծառայենք Իր կամքին:

Ժ. Կ. Պ.

Լիոն, 14 Ապրիլ 1938

Աստուած տրտում հոգիները չսիրեր, Անիկա կ'ատէ ճգմող ուսուցումները: Վասն զի Ան իր Որդին չղրկեց մեզ մեկամաղձոտ ընելու, այլ մեզ երջանկացնելու: Հոն, ուր հոգեկան այս ուրախութիւնը կը թագաւորէ, սիրտը ամբողջ ուրախութեամբ գեղուն է Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքով:

Լուստեր

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԱՐՁԱԳԱՆԴ

ՄԵԿԵԱԲԹԻԻ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ

«Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէ աւելի խղճալի ենք»։ Ա. Կորնթ. ԺԵ 19

Յիսուս Քրիստոսի խաչելութեան ու չարչարանաց օրերուն, իսկոյն կը յաջորդէ Սուրբ եւ հրաշափառ յարութեան ցնծալի առաւօտը։ Ներշնչից է սոյն օրը, զի բնութիւնն ալ ծագկած ու կենդանացած է։ Այս եղելութիւնը այնքան իրական ու ճշմարիտ է և միանգամայն նշանակալից, որու մասին տարակուսանօք և հարեանցի աչքով նայիլ ու անցնիլ, մեծ անմտութիւն ըրած կ'ըլլանք։

Եթէ լուրջ և անկեղծ հոգիով մը խորհինք Փրկչին յարութիւն առնելուն վրայ, մտքի յափշտակութեամբ մը հիացած, անպատու ուրախութեամբ պիտի լեցունինք։ Քանզի մեզի նոր կեանք, նոր լոյս և նոր յոյս կուտայ։ Ու մենք բերկրութեամբ կը փութանք այս զարմանալի դէպքը աշխարհին իմացնել աշակերտաց պէս, որոնց միակ նշանաբանը եղած էր քարոզել խաչեալ ու յարուցեալ Քրիստոսը, Որով մեղքերու թողութիւն և արդարանալու ու յաւիտեանական կեանքին արժանանալու յոյսը ունինք։

Սակայն քանինե՞ր ճիշդ նշանակութիւնը ճանչցած են Պօղոս Առաքեալին պէս, և այդ հաւատքով կը կատարեն Սուրբ յարութեան հանդէսը։ Կը վախճամ թէ միայն այս աշխարհին բարիքները վայելելու համոզումով մը Քրիստոսի յուսացողներ ըլլանք, և հետեւաբար Չատիկն ալ այդ ուրախութեամբ կատարողներ։ Եթէ այսպէս ըմբռնած ենք, ինչքան կը սխալինք և ի՞նչ ալ խղճալի մարդիկ ենք, ըստ վերոյիշեալ համարին։ Բայց ո՛չ, մենք յարութեան որդիները ըլլալու կոչուած ենք։

Եթէ Տէրը գերեզմանին մէջ մնար, անշուշտ բոլոր յոյսերը ի գերեւ պիտի ելլէին։ Սակայն հիմա Իր հրաշափառ յարութեամբ, մահուան և գերեզմանին վրայ յաղթական, կենդանի ու փառաւորեալ Փրկչի մը Տէր ենք, որ կեանքը եւ անմահութիւնը ի լոյս հանեց (Բ Տիմէթ. Ա 10)։ Ըստ որու վստահ կրնանք ըլլալ թէ՛ Իր յարութեամբ, մենք հաւատացեալներս ալ, յարութիւն պիտի առնենք վերջին օրը, եթէ անյաղթ կենանք հաւատքին մէջ։ Ատոր համար Առաքեալը համարձակ կը գրէ թէ, «Ինչպէս տասներկուքին

և յետոյ հինգ հարիւրէ աւելի եղբայրներուն երեւցաւ ու ամենէն ետքը իրեն ալ»։ ուրեմն կ'ըսէ «Ինչպէ՞ս ձեզմէ մէկ քանիները կ'ըսեն որ մեռելներու յարութիւն չկայ. եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ»։

Իցի՛ւ թէ 1938 թ Չատիկը երբ կ'ընենք, շատերուն սրտին մէջ այնպէս մը նշուլէր Սուրբ յարութեան լուսաշող ճառագայթները, որպէսզի Իր յարութեամբ շատեր իրենց մեղքերէն վերանորոգուած, կեանքի նորոգութեան մէջ պտտէին, բոլորովին Իրեն յանձնուած, սպասելով հաւատքով երկինքէն Իր փառաւոր գալստեան։

Պօղոս Առաքեալ սիրով կրեց բոլոր նեղութիւնները, չարչարանքները ու վտանգները, միմիայն մէկ նպատակով, մեռելոց յարութեան յոյսին համար։ Կ'ըսէ որ, «Եթէ Եփեսոսի մէջ մարդոց նման զազաններու հետ մարտնչեցայ ի՞նչ օգուտ է ինծի, թէ որ մեռելները յարութիւն չառնեն» (32 համար)։ Որով իր ջանքն էր «ճանչնալու զԱնիկա և Անոր յարութեան զօրութիւնը, որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնի» (Փիլ. Գ 10, 11)։

Ուրեմն պէտք է ամէն հաւատացեալ այս հոգիով ըմբռնէ յարութեան իմաստը և այնպէս քալէ։ Յայնժամ արժանաւորապէս կատարած կ'ըլլանք Սուրբ Չատիկը, ու մանաւանդ վերջն ալ Յարութեան օրը Իր փառքը կը վայելենք յաւիտեան։ «Երանելի և սուրբ է ան, որ առաջին յարութեան մէջ բաժին ունի» (Յայտ. Ի գլ., 6 համար)։

Սիրելի «Բանբեր» ընթերցող եղբայրս և քոյրս, եթէ մինչեւ հիմա շատ Չատիկներ առանց յարութեան զօրութիւնը ճանչնալու անցուցած ես, և իր խոր իմաստին չես թափանցած, այլ միայն այս աշխարհին համար, եթէ Քրիստոսի յուսացած ես, շատ խեղճ մէկն ես։ Ուստի թող այս Չատիկը պատահութիւն մը ըլլայ քեզի, Սուրբ Յարութեան բուն նշանակութիւնը հասկնալու, և Յարուցեալ Փրկչին հետ միանալով յաւէտ ցնծալու։ Օ՛հ ուրեմն, եռանդով երգենք «Հրեշտակն յերկնից կ'իջնայ» և Ներսէս Շնորհալիին ջերմատեղեալ բանն յանէից»ը։

Տէրոջմով Ձեր եղբայրը
ՅՈՎԻՄԻՓ Թ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Քրիստոնեայ ըլլալ ըսել է — բարի լուր մը տանիլ կեանքի ընթացքին։

ԼՈՒՍՆԵՐ




ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ

ԿԵՆ ԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԿՈՒՁԵՆՔ ՅԻՍՈՒՍԸ ՏԵՍՆԵԼ

Եկեղեցիի մը քարոզիչը, որ Աւետարանը ամբողջութեամբ չէր քարոզէր, Կիրակի մը ամպիրոնին վրայ թուղթ մը գտաւ, որուն վրայ Յովհ. ԺԲ 21 գրուած էր: Քարոզիչը Սուրբ Գիրքը բանալով կարդաց Յոյներուն փափաքը «Կուգենք Յիսուսը տեսնել»: Այն օրէն սկսեալ իր համայնքին այս փափաքը զինք անհանգիստ ըրաւ, Յիսուսը փնտռեց և Անոր մէջ իր հոգւոյն խաղաղութիւնը գտաւ: Անոր քարոզները փոխուեցան: Աւետարանին քաղցր աւետիսը ամէն Կիրակի կը հնչէր ամպիրոնէն և Քրիստոսի կեանքին և չարչարանքներուն միջոցաւ կատարուած փրկութիւնը կը յայտնաբերուէր:

Քարոզիչը շատ չանցած ամպիրոնին վրայ երկրորդ թուղթ մը գտաւ, որուն վրայ այս անգամ Յովհ. Ի 20 նշանակուած էր: Համայնքը հիմա քարոզիչին իրենց մատակարարած կենաց հացին համար իր շնորհակալութիւնը կը յայտնէր սա խօսքերով «Աշակերտներն ալ ուրախացան երբոր Տէրը տեսան»:



ԱՊԱՌԱՍԸ ԿՈՏՐՏՈՂ ՄՈՒՐՃԸ

Հնդկաստանի միսիոնարներէն Տօքթ. 2էմպլըրէյն, օրին մէկը ինքզինքը և զործակիցները հնդիկ հակառակորդ խուժանի մը առջեւ գտաւ հրապարակի մը վրայ: Անոնք ձեռքերնուն մէջ քարեր բռնած, Քրիստոսի այս վկայները սպաննել կ'ուզէին: 2էմպլըրէյն անոնցմէ խնդրեց որ նախ թոյլատրեն իրեն պատմութիւն մը պատմելու: Այն ատեն անոնց խօսեցաւ Աստուծոյ սիրոյն ու իրենց համար Իր Որդւոյն զոհաբերութեան մասին: Ապա պատմեց Յիսուսի անձնաւորութեանն ու զործին, չարչարանքներուն ու մահուան, յարութեանն ու համբարձմանը մասին և աւետեց որ ամէնքն ալ Անոր վիշտացաւ մեղքերնուն թողութիւն կրնան ընդունիլ և ապա պօռաց «Եթէ կ'ուզէք հիմա զիս կրնաք սպաննել»:

Բայց անոնք բարկութենէ դադրած, քարերը մէկզի նետեցին և իրենցմէ ամենէն շատ աղմուկ հանողին աչքերը թրջած էին: Շատերը Աւետարաններ գնեցին, աւելի դիտնալ ուզելով այս զարմանալի անձնաւորութեան վրայով, որ իրենց համար մեռած էր:

«Միթէ իմ խօսքս կրակի պէս չէ՞, կ'ըսէ Տէրը, ու ապառաժը կոտորտող մուրճի պէս չէ՞», Երեմ. ԻԳ 29: «Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ և ամէն երկսայրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչեւ շունչը ու ոգին...», Եբր. Դ 12:



ՄԵՂՔԻ ՀԱՄՈՉՄԱՆ ՏԱԿ

Պատուելի Պ. հետեւեալը կը պատմէ.—
«Առտու կանուխ ննջարանիս դուռը զարնուեցաւ, առանց լաւ խորհելու մտիր ըսի: Հսկայ մարդ մը ներս մտնելով ուղղակի անկողնիս առջեւ ծուռկի եկաւ: Առաջին վայրկեանին չըմբռնեցի թէ արդեօք երա՞զ մը կը տեսնեմ թէ ոչ արթուն եմ: Բայց իրականութիւն մըն էր, ես արթուն էի և առջեւս եղողը ծնրադրած ու իր երեսը վերմակովս գոցած հարուստ գիւղացի մըն էր: Ձեռքերս անոր զլխուն վրայ դրի, բաւական ատենէ մը վերջ նա քիչ մը հանդարտեցաւ և անոր հետ կրցայ աղօթել: Ինքն ալ թոթովելով աղօթեց ու լո՛րկ մեկնեցաւ: Անկէ վերջ իրեն հետ լուրջ խօսակցութիւն մը ունեցայ և նա Քրիստոսի հետ նոր կեանք մը սկսաւ»:

«Արդեօք ի՞նչ էր պատճառը որ այս մարդը ստիպած էր առտու կանուխ ննջարանիս մէջ զիս փնտռելու: Նախորդ երեկոյին աւետարանչական ժողովին մէջ ներկայ եղած էր, հոն իր մեղքերը ճանչցած և բոլոր գիշեր չէր կրցած քնանալ: Բայց հիմա Յիսուսի մէջ խաղաղութիւն գտաւ և անկեղծութեամբ Քրիստոսի հետեւիլ ուզող մէկ մըն է»:



ԲՈԼՈՐԴ ԱԼ ԵԿԷՔ

Օրին մէկը տիկին մը քովս եկաւ ու ըսաւ, «Ես չեմ կրնար Քրիստոսի գալ, քանզի սիրտս շատ կարծր է»: Ես ըսի, սիրելի տիկին, գրուած չէ «Ով բոլոր կակուղ սիրտ ունեցողներ ինծի եկէք», հապա սեւ սրտեր, պիղծ սրտեր, կարծր սրտեր, կակուղ սրտեր, բոլոր սրտեր եկէք: Յիսուսէն ի գատ ո՞վ կրնայ քու կարծր սիրտդ կալուղցնել:

ՄՈՒՏԻ

ՏԷՐՈՂԸ ՅԱՆՁՆԷ ԳՈՒ ՃԱՄԲԱԴ

Գերմանիոյ մէջ 1806 — 1807 թ. պատերազմի ընթացքին խուճը մը զինուորներ պատուելիի մը տունը լեցուեցան, հոն բնակելու համար և անոնց սպան սպանալով պատուելիէն համադամ կերակուրներ և ըմպելիքներ պահանջեց: Հովիւին փոքրիկ աղջիկը երբ իր հօրը վշտալից զէմքը տեսաւ, իր կիթառը ձեռքը առած հետեւեալ երգը նուագելով երգել սկսաւ,

«Բու ճամբադ և ինչ որ քեզ կը վշտացնէ,
Երկինքը կառավարող, հաւատարիմ Տէրոջը
յանձնէ»:

Տակաւին երգը չվերջացած հրամանատարը ներս մտաւ: Հայր եւ աղջիկ վախցան: Հրամանատարը պահանջեց որ աղջիկը իր երգը շարունակէ: Երբոր երգին վերջին համարը լսեցաւ, հրամանատարը ըսաւ. «ով բարեպաշտ մանուկ, քեզմէ շնորհակալ եմ որ ինծի տուիր այն հոգեւոր անունդ որմէ երկար ատենէ ի վեր զրկուած էի: Ես քու ծնողքիդ վախուն ականատես եղայ, ուրախ եղիր, երեք ժամէն ձեզ այս նեղիչներուն ձեռքէն պիտի ազատեմ ու այլեւս ու եւ մէկը ձեզ չպիտի կրնայ նեղել»: Շատ չանցած զինուորներուն զունդը տունը ձգեցին ու հեռացան եւ պատուելիին ընտանիքը զիրենք զարմանալի կերպով ազատող Տէրոջը փառք տուաւ:

«Տէրոջը յանձնէ քու ճամբադ ու անոր յուսա եւ անիկա լաւ կ'ընէ»: Սաղ. 37 : 5:

(Գերմ. թարգմ.) Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՀԱՏ ՀԱՒԱՏԱՅԵԱԼԸ ԵԿԵՂԵՅԻՆ ՄԷՋ

Փրկութիւն. — Ս. Գրքին մէջ փրկութիւն ցուցնող թէ երբայեցերէն եւ թէ յունարէն բառերը կը պարունակեն նաեւ ազատութեան, ապահովութեան, պաշտպանութեան, բժշկութեան, եւ առողջութեան իմաստները:

Փրկութիւնը Աւետարանին համապարփակ

բառն է (Հոով. Ա 16) որ իր սահմանին մէջ կ'առնէ փրկագործութեան բոլոր գործողութիւններն ու անոնց կատարման եղանակները, ինչպէս արդարացում, ծախսու առնուիլ, շնորհք, քաւութիւն, սեպուիլ, Թողութիւն, սրբութիւն և փառաւորում: Փրկութիւնը բայի ժամանակներ ունի, (1) հաւատացեալը փրկուած է մեղքին յանցաւորութենէն եւ պատիժէն, (Ղուկ. է 50, Ա. Կոր. Ա 18, Բ. Կոր. Բ 15, Եփես. Բ 5, 8, Բ. Տիմ. Ա 9) եւ ապահով է Արդարացում: (2) — Հաւատացեալը յարատեւ փրկուելու վիճակին մէջ է (is being saved) մեղքի ունակութենէն եւ գերիշխանութենէն (Հոով. Զ 14, Փիլ. Ա 19, Բ. 12, 13, Բ. Թես. Բ 13, Հոով. Ը 2, Գաղ. Բ 19, 20, Բ. Կոր. Գ. 18). Սրբութիւն: (3) — Հաւատացեալը պիտի փրկուի Գրիստոսի հետ լման կերպարանակից ըլլալու իմաստով. (Հոով. ԺԳ 14, Եբր. Ժ 36, Ա. Պետ. Ա 5, Ա. Յովհ. Գ 2): Փրկութիւն:

Այժմ հաւատացեալը իր մէջ ունի Աստուծոյ կեանքը՝ որ անբաժանելի մասն է յաւիտենական կեանքին որ Գրիստոս Յիսուսի մէջ է. — մէկ կեանք, Անոր մէջ և հաւատացեալին մէջ, — որթ եւ ճիւղեր, զլուխ եւ անդամներ. Ա. Կոր. Զ 17, Գաղ. Բ 20, Կող. Ա 27, Գ 3, 4, Ա. Յովհ. Ե 14, 12, Յովհ. ԺԵ 1—5, Ա. Կոր. ԺԲ 12—14):

Սրբութիւն. — Թէ Հին և թէ Նոր Կտակարաններուն մէջ նոյն երբայեցերէն եւ Յունարէն բառերը որ Սուրբ և Սրբել թարգմանուած են՝ կը նշանակեն «Աստուծոյ համար զատուած»: Երբ առարկաներու համար կը գործածուին՝ քնակաւարար այս բառերը բարոյական ներքին յատկութիւն մը չեն ներկայացներ: Իսկ երբ անձերու համար կը գործածուին՝ անոնք ունին երբեակ նշանակութիւն: (1) Դիրքի տեսակէտով հաւատացեալները յաւիտենապէս «Աստուծոյ համար զատուած են» «Յիսուս Գրիստոսի մարմինին մէկ անգամ պատարագուելովը»: (Եբր. Ժ 9, 10): Ուրեմն հաւատացեալները դիրքով «սուրբ» կամ «սուրբեր» են իրենց հաւատքով փրկուած վայրկեանէն սկսեալ: (Փիլ. Ա 1, Եբր. Գ 1): (2) Գործառական տեսակէտով, հաւատացեալը յարատեւօրէն սրբացուելու վրայ է (is being sanctified) Աստուծոյ խօսքին միջոցաւ՝ Ս. Հոգիին գործելովը. (Յովհ. ԺԷ 17, Բ. Կոր. Գ 18, Եփես. Ե 25, 26, Ա. Թես. Ե 23, 24): (3) Կատարելութեան տեսակէտով (consummation), հաւատացեալին կատարեալ սրբութիւնը Տէրոջը յայտնուելուն կ'սպասէ: (Եփես. Ե 27, Ա. Յովհ. Գ 2):

Թուոց 2 զլիսուն մէջ Ուխտաւորը (Նագիր —

Նազովրեցի) անձ մըն էր բողոքովին «Աստուծոյ համար զատուած»: Գինին բնական, մարմնաւոր ուրախութեան օրինակը ըլլալուն (Սաղ. ԾԴ 15) նա գինի պիտի չխմէ՝ ցուցնելու համար թէ կատարեալ նուիրումով մը նա իր ամբողջ ուրախութիւնը միայն Տէրոջը մէջ կը գտնէր, (Սաղ. 27, 7, 72, 12, Ամբ. Գ 18, Փիլ. Գ 1, 3, Դ 4, 10): Երկար մագերը՝ որ բնականօրէն մարդուն համար անարգանք մըն էր (Ա. Կոր. ԺԱ 14) Ուխտաւորին «զատուած» ըլլալուն արտաքին նշանն էր, ցուցնելով Նշովայի համար անարգանք կրելու իր յօժարակամութիւնը: Ուխտաւորի այս օրինակը իր լման կատարումը գտաւ Յիսուսի մէջ՝ որ «սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներէն զատուած էր»: (Եբր. 7, 26) Նա բողոքովին Աստուծոյ համար զատուած էր՝ և թոյլ չտուաւ որ որ և է բնական պահանջ գինք Աստուծոյէ ետ կեցնէ և կամ ուրիշ կերպով զբաղեցնէ: (Յովհ. Ա 18, 2, 38, Մատթ. ԺԲ 46—50)


Քրիստոս մեզ կը լուայ ու կը սրբէ երկու կերպով.

1) Մեղաւորը մեղքին յանցապարտութենէն. Իր արիւնովը կ'ընէ զայս: Մեղաւորը շնորհք տակ գալով՝ իր հաւատացած վայրկեանին մեղքերէն լուացուած կ'ըլլայ, (Մատթ. ԻԶ 28, Եբր. Ա 3, Թ 12, Ժ 14, Սաղ. ԾԱ 7):

2) Հաւատացեալը մեղքին շփումէն. Իր խօսքովը — ջրով կ'ընէ զայս: Արիւնով և ջրով լուացուելու այս երկու տեսակները ի յայտ կը դուրսնան Յովհ. ԺԳ 10 և Եփես. Ե 25, 26ի մէջ: «Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար, որպէս զի զանիկա սրբէ ու մաքրէ աւագանին ջրովը՝ խօսքով»:

Յովհ. ԺԳ. 10ի մէջ ոտնլուայի առթիւ Յիսուսի ըսած սա խօսքը. «Լուացուածին ոտքերը լուալէն զատ ուրիշ բան պէտք չէ» կը յիշեցնէ մեզի արեւելեան պատկեր մը՝ ուր մէկը հանրային բազմութիւն մը իր տունը վերադարձած ըլլալով՝ ճամբուն փողիէն կրկին աղտոտած իր ոտքերը լուալու. պէտքը կ'զգայ, մինչդեռ մարմնին մնացած մասը այդ լուացումին պէտքը չունի: Այսպէս ալ հաւատացեալը՝ օրէնքին առջեւ ամէն մեղքէ միանգամ ընդ միշտ մաքրուած է (Եբր. Ժ 1—12) բայց նա պարտի իր ամենօրեայ մեղքերը հօրը բերել խոստովանութեամբ՝ որպէս զի անխղիւ հաղորդակցութեամբ Հօրը և Որդւոյն մէջ կենայ, (Ա. Յովհ. Ա 1—10): Քրիստոսի արիւնը յաւիտենապէս կը ջնջէ ամէն մեղք, որոնցմով օրէնքը կրնար դատապարտել հաւատացեալը.

բայց նա կը կարօտի յարատեւ մաքրումի մեղքին շփումէն (Ա. Յովհ. Ե 6): Հին Կտակարանի օրինակով Աստուծոյ ներկայութեան մօտենալու կարգն էր նախ զոհի պղնձէ սեղանը և յետոյ աւագանը (Ելից Խ 6, 7) տե՛ս նաեւ կարգը Ելից. Լ 17—21ի մէջ: Քրիստոս չկրնար հաղորդութեան մէջ մնալ մեղքով աղտոտած սուրբի մը հետ. բայց նա կ'ուզէ և կրնայ մաքրել զայն:



Բ.

Հրէան արդեօք ազատուեցա՞ւ խաղաղութեան փրկիչը մերժելէն: Յիշէ, ի՞նչ ըսաւ Տէրը Երուսաղէմի վրայ լալով. «Գոնէ այս քու օրուանդ մէջ գիտնայիր քու խաղաղութիւնդ. բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ: Ուստի քու տունդ քու վրադ աւերակ դառնայ: Այսպէս ալ պիտի ըլլայ հեթանոսաց ազգերուն վախճանը: Ահով և զոդով գնա՛ խաչին ոտքը, աճապարէ քանի շնորհաց դուռը չէ դոցում, խոստովանէ անառակին և կամ մաքսաւորին պէս քու մեղաւոր ըլլալը և հաւատա՛ ու ընդունէ փրկչին կատարեալ գործը, որ ըրաւ ինծի և քեզի համար խաչին վրայ: Կասկածով մի մօտենար ինչեալին, և բան մըն ալ մի աւելցնէր Անոր մաքուր գործին վրայ, միայն հաւատա, միայն ընդունէ բանտապետին պէս, իր կատարած գործը, ու պիտի փրկուիս. «Ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս չեմ հաներ»:

«Տէր Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ», Փրկութիւնը գործքերէն չէ, այլ Աստուծոյ ձրի պարգեւն է (Յով. 6. 23) Փրկութիւնը եթէ գիտնաս, շնչածղ օդին պէս ձրի է ամենուն, և թէլէ՛ֆօն ընելու չափն ալ դիւրին է. ուրեմն կանչէ Փրկչիդ հաւատքով ու կարօտով փրկութեանդ համար: Պատասխան պիտի գտնես: «Նղիցի քեզ ըստ հաւատոյ քո»: Պայմանաւ որ հաւատաս: «Ամէն ով որ Անոր հաւատայ, պիտի չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»: Այսքան դիւրին և այսքան թեթեւ է փրկութիւնը:

Հայր Աստուած իր լաւագոյնն ըրաւ, անարատ Գառը մորթեց, սեղանը պատրաստեց

հրաւէրը ղրկեց բոլոր ազգերուն և անհատներուն, «Եկէք, ամէն ինչ պատրաստ է»: Մի մըտմըտար, աւելորդ առարկութիւններ մի ըներ, Ղովտին կնոջ պէս ետիդ մի նայիր, առ կինդ, զաւակներդ, կանչէ բարեկամներդ և զբացիներդ Կոռնէլիոսին պէս, տեղը շատ մեծ է: «Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան»: Աստուած կ'ըսէ եկուր, Որդին կ'ըսէ եկուր, Ս. Հոգին կ'ըսէ եկուր, ձրի առ ու կեր, ընթրիքին բոլոր ծախքը վճարուած է Գառնուկին սուրբ և պատուական արիւնով: Ձրի է, բոլորովին ձրի, քեզ կը մնայ հաւատալ և վազել, զի երկինքը ուժեղները պիտի յափշտակեն: Իսկ եթէ մերժես, գիտե՞ս ինչ պահուած է քեզի, Աստուծոյ յաւիտենական տանջանքը, իսկ եթէ յօժարիս ու պզտիկ տղու մը պէս հաւատաս, յաւիտենական կեանքը: Երկուքն ալ յաւիտենական են: Ընտրէ որն որ կ'ուզես:

Ա՛խ, շատեր կան Եղիսէի ծառային պէս, որոնք խաբեբայութիւնով հազուադէպ և զրամ հաւաքելու ետեւէ են: Շատեր կան որ Համանի պէս փառասիրութեան ետեւէ են: Արդարին տեղը ամբարիշտը պիտի կորսուի: Շատեր կան Արիստոգորին պէս իրենց ծնողաց անհնազանդ: Ոմանք առանց վայելելու, Փարաւոնի պէս իրենց սիրտերը կը խտացնեն Աստուծոյ խօսքին դէմ: Ոմանք կան որ Պիղատոսին պէս Տէր Յիսուս յաւիտենական փրկիչը իրենց տան մէջ քով քովի կ'ունենան, բայց լաւագոյնս ընտրելու կը վախնան բազմութենէն: Շատեր կան Փելիքսին պէս որ երբ փրկութեան խօսքերը կը լսեն՝ կ'ըսեն. «Դուն հիմա դնա, երբ ժամանակ ունենամ քեզ կը կանչեմ»: Փելիքս ալ ժամանակ չունեցաւ...: Աւետարանը կ'ըսէ. հիմա է փրկութեան ժամանակը, հիմա է փրկութեան օրը:

Երբ տէրը գայ և օգին մէջ յափշտակէ իրենները, այն ատեն սիրելիները պիտի բաժնուին իրարմէ, զաւակները իրենց ծնողքէն, աշակերտը իր ուսուցիչէն, զործաւորը զործատէրէն, յաճախորդը խանութպանէն, ժողովուրդը հովիւէն: Ասոնցմէ մէկը պիտի առնուի ու միւսը պիտի ձգուի: (Մատթ. 24 և Ղուկ. 17): Ո՛վ մարդ, քանի որ այդ ցաւալի բաժանումը չէ եկած, օգտուէ Աստուծոյ երկայնմութենէն: Պօղոս առաքեալի նման ես ալ կ'ըսեմ. կ'ողաչեմ ձեզ, հաշտուեցէք Աստուծոյ հետ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Դժոխք մտնելը ժառանգական սեղաքերու համար չէ, անոնք Քրիստոսով քաւուած են խաչին վրայ, միայն մէկ սեղաք ունիս որուն համար դժոխք պիտի իջնես, այն է՝ անհաւատութեամբ Քրիս-

տոսը և անոր քաւութիւնը մերժել: Յովհ. Ը 24 և Եբր. Բ 3: Ցաւալի է որ տակաւին շատեր կան որ կը խնդան փրկութենէն վրայ, զանոնք մոլեռանդներ սեպելով: Ո՛վ է որ կը դատապարտէ փրկութենէն: Աստուած է որ մեզ կ'արգարացնէ Յիսուս Քրիստոսով: (Հովհ. Ը): Արդարը ատողները պիտի դատապարտուին (Սաղմ. 34): Հին Կտակարանի մէջ, երբ Մարգարէն Իսրայէլի թագաւորին ներկայացաւ Տէրոջ պատգամը տալու, զուրս ելլելու պարագային մարդիկ ըսին թագաւորին, այդ խենթ մարգարէն եկաւ քեզի ի՞նչ ըսաւ: Ահա ճիշդ նոյն օրերն է որ կ'ապրինք: «Մարգարէն անմիտ և հոգեւորը խենթ եղաւ»: (Ովսեայ 9): Բայց չի մոռնանք որ Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց և Աստուծոյ յիմարը մարդոցմէ շատ աւելի իմաստուն է, քանզի ճիշդը ընտրելու իմաստուն եղեր են: (Ա. Կորնթ. 1):

Տէրը երբ գայ արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ: Երբ փեսան ուշացաւ, ամէնքն ալ լծմրեցան ու քնացան: Բայց փառք Աստուծոյ տակաւին շատեր կան որ Բահաղին երկրպագած չեն, և ես անոնցմէ մէկն եմ ու հազար անգամ կը նախընտրեմ Տէրոջ համար խենթ և անմիտ սեպուիլ, քան թէ իմ Տէր ու փրկիչ Յիսուս Քրիստոսի ինծի համար թափած սուրբ և պատուական արիւնով ձրի փրկութիւնը մերժել: Կը հաւատամ թէ շուտով տեսութիւնը պիտի լինի: Ես կը հաւատամ և Սուրբ Գիրքով կը թելադրեմ իմ բարեկամներս թէ այժմ ժամանակն է ահով ու զոդով ապաշխարելու, զի թագաւորաց թագաւորը կուգայ: Կէս գիշերին ձայն մը եղաւ, ահա փեսան կուգայ...: Պատրա՞ստ ես, եթէ ոչ աչքերուդ քուն և արտեւանունքներուդ նիրհում մի տար, մինչեւ հաւատոյ վստահութիւն ունենաս անձիդ համար, այն ատեն «Ել ընդ յառաջ պննեալ զարթուք»: «Երանի՛ այն ծառաներուն որ Տէրը երբ գայ զանոնք արթուն պիտի գտնէ»: (Ղուկ. 12. 37):

ԱՐՄԷՆ ՇԱՀՊԱՂԵԱՆ

Ան որ իր կեանքին մէջ Աստուած որպէ՛ս ճամբու ընկեր ունի, միշտ կը հանդիպի մարդոց որ ատոր տեղեակ են, առանց իր այդ մասին խօսելուն:



Նկատի առ ինչ որ Յիսուս Քրիստոս քեզի համար ըրած է, որպէս զի կարենաս սորվիլ թէ ինչ է քու պարտականութիւնդ ուրիշներուն հանդէպ:

Լուսեր



ՄԱՀԷՍ ՎԵՐՋԸ (*)

Գրեց՝ Յ. ՃԷՆԱՆԵԱՆ

Մահէս վերջը սիրելիներ,
Գիտեմ՝ զիս շատ պիտի սիրեն.
Խունկ ու ծաղիկ պըսակ ու սէր,
Պիտ' հետեւին տխուր շիրմիս:
Բայց ի՛նչ կ'ըլլար. հիմա տըռէր,
Բուրու՛մն անոնց եւ շնչէի:

Մահէս վերջը անուանս համար,
Գիտեմ՝ գովեստ պիտի հիւսնի.
Բայց այժմ՝ գործերս ծանր ու դժուար,
Զօրավիգի կը կարօտիմ:
Հիմա մինչ ես կ'ապրիմ տկար,
Գորով, ժպիտ, ինձ կեանք կուտան:

Մահէս վերջը սրտեր անձկագին,
Սեւ դագաղըս ծանր ուսամբարձ,
Յուրտ գերեզման պիտի տանին:
Բայց, ո՛հ, հիմա թէ կըլէին,
Բեռիս մէկ մասն իրենց ուսին,
Այնքան կանուխ չէի մեռներ:

Մահէս վերջը կը մոռցուին,
Թերութիւններս ու սեւ մեղքերս.
Եւ սոսկ ազնիւ մէկ արարքս սին.
Կը վերսիշուի սուրբ պաշտանքով:
Բայց այդ սիրող քաղցը նայուածքին,
Հիմա է որ շատ պէտք ունիմ:

Հիմակ մէկ վարդ, սակայն վաղուան
Ծաղկաստանն է վարդաբուրբան:
Լոկ մէկ նայուածք համակրութեան,
Հազար ներքող, գովեստ կ'արժէ:
Շի՛թ մը խրախոյս մահէս առաջ,
Արցունքի ծով մ'է ինձ համար:

(Ազատ թարգմ. Անգլիերէնէ)
ԱԿԻԻԼԻՆԷ

(*) Սոյն ոտանաւորը գրուած է վախճանեալ Աստուծոյ մէկ զաւակին կողմէ եւ խորհրդածութեան լուսնիւթ մըն է ամենուս համար:



ՊԱՏԱՆԵԱՅ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՐԻՍ

ՓՈՔՐ ՍԵՒԱՄՈՐԹԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հսած եմ շատ լաւ պատմութիւններ, զորոնք բոլորն ալ գրեթէ մոռցած եմ հիմա, բայց ասիկա, Սամուէլ Մորիսը, այնքան ազդու է որ խորապէս դրոշմուած է իմ յիշողութեանս մէջ: Ամէն անգամ որ կը խորհիմ այս խոնարհ սեւամորթին վրայ, ինքզինքս աւելի կ'ազդուրուած և քաջալերուած կը զգամ: Չեմ գիտեր ի՞նչ կայ զօրացնող և քաղցրացնող, որ կը լուսարձակուի այս կեանքէն ու կը թափանցէ իմ բոլոր գործերուն մէջ: Ծանօթներու մէջ ունի՞ք բարեկամ մը, որ լման յանձնուած չէ Յիսուսի, զրկեցէք զայն Սամուէլ Մորիսի: Աստուծոյ թագաւորութեան համար ծախսելու դրամ ունի՞ք, գնեցէք այս պղտիկ գրքոյկէն և ցրուեցէք զայն Կիրակնօրեայ դպրոցներու, քրիստոնեայ հաստատութիւններու, Սուրբ գրային կարգերու մէջ և այլն, «Յիշեցնելով Սամուէլ Մորիսը, որ թէպէտ մեռաւ, բայց տակաւին կը խօսի»:

Ch. Alexander

Շնորհակալ եմ Քեզմէ, ո՛վ Հայր, Տէր երկնի ու երկրի, որ այս բանքը ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն եւ տղոց յայտնեցիր:
(Մատթ. ԺԱ. 25)

«Բապու» եղած է Սամուէլ Մորիսի առաջին անունը: Անիկա ծնաւ արեւմտեան Ափրիկէի շատ պղտիկ ցեղի մը ծոցին մէջ, որուն պետը բուն իսկ իր հայրն էր:

Բապու երբ տակաւին մանուկ էր, գերի ինկաւ դրացի հակառակորդ ցեղի մը ձեռքը և այն բոլոր գիւղերն ալ, որոնց վրայ կ'իշխէր իր հայրը, գրեթէ քար ու քանդ եղան:

Որպէս ծախուած գերի մը, Բապուի կացութիւնը շատ տխուր էր. իբրեւ պատանդ զբաւուելով՝ առարկայի մը նման պահ դրուած էր զբաւատան մը մէջ: Իր հայրը յաջողեցաւ նորէն գնել և իր քովը պահել զայն մինչեւ անոր 12 տարեքը: Բայց ցաւալիօրէն այս տարիքէն վերջը նորէն յափշտակուեցաւ ու դարձեալ ծախու հանուեցաւ:

Սամուէլ Մորիս, իր այս երկրորդ գերութեան վիճակէն մասնաւոր յիշատակ մը կը պատմէ, զոր միշտ իր յիշողութեանը մէջ կը պահէր շատ յստակ և որոշ կերպով:

Անգամ մը կը պատմէր ինծի, իր հայրը կ'ուզէ որ կրկին ետ առնէ գինքը, ուստի ասոր համար կը բերէ փղոսկր, ընկոյզ, արմաւ եւ ձգախէժ (քաււչու) նիւթեր, որոնք այն ժամանակուան նոյնիսկ հիմա ալ այն երկրին գործածական դրամն է: Սակայն Սամուէլին տէրը բերուած ապրանքները քննելէ վերջ, անբաւական կը սեպէ և կը մերժէ իր գերին ազատ արձակել: Ասոր վրայ հայրը կը յօժարի ապրանքներուն հետ Սամուէլին քոյրն ալ տալ, որ տարիքով եղբորմէն աւելի պզտիկ էր: Բայց Սամուէլ խիստ բարկութեամբ հօրը դէմ ընդդիմանալով՝ զայն կ'երգնայնէ որ այսպէս չվարուի, ըսելով թէ ինք աւելի տարեց է քան իր քոյրը եւ թէ ինք շատ աւելի դիւրաւ կրնայ դիմանալ գերութեան ծանր չարչարանքներուն: Վերջապէս այս երկու պետերը իրարու հետ չհամաձայնեցան և Սամուէլը գերութեան մէջ մնաց:

Այս օրէն յետոյ խեղճ պզտիկին կեանքը երկար ու տաժանելի նահատակութիւն մը կ'ըլլայ: Տէրը, որ գինք գերի կը պահէր, երդում ըրած էր որ զայն լաւ դնով մը պիտի ծախէ, և անոր համար անխղճօրէն կը չարչարէր զայն, խեղճ պզտիկին հայրը տեղեակ պահելով այս բոլորին, որ յօժարէր աւելի վճարելու իրեն:

Շատ վերջերը Սամուէլ Մորիս ինքը կը պատմէր թէ ամէն օր գինք կը խարազանէր և ամէն յաջորդ անգամին մտրակին հարուածները աւելի զօրաւոր ու աւելի ցաւազին կը դառնային իրեն:

Ինչո՞վ կը խարազանէր քեզ, հարցուցի ես իրեն: «Տեսակ մը զաւազանով, որ չուանէ խարազանի մը նման դիւրաւ կը պրկուէր»:

Կ'ենթադրեմ թէ անշուշտ ձեռնիլէ առաջ կը մերկացնէր քեզ:

Ո՛հ, պարոն, պատասխանեց ան, ժպտելով և իր ճերմակ ակռաներուն շարքը ցոյց տալով, «Զիս պիտի մերկացնէ՞ր, չէ՞ք գիտեր որ ես ոչ հագուստ կը հանէի, ոչ բաճկոն և ոչ ալ շապիկ, արդէն հագնելիք ոչինչ ունէի»: Ուստի կրնաք հասկնալ որ խեղճ պզտիկ տղուն մերկ մարմինին վրայ խարազանին հարուածները կ'իջնէին անխնայօրէն, վայրենի մարդու մը հուժկու ձեռքովը, առանց զթուլեան զգացումի: Ասանկով վայրենի մարդուն նպատակն էր շարժել հօրը գութը, որ յօժարէր պահանջուած աւելի սուղ գնովը փրկել իր զաւակը:

Վերջապէս, աւելի չկրնալով համբերել Սամուէլ, ուրիշ բան չէր երազեր, եթէ ոչ միայն փախչիլ:

Յարմար պատեհութիւնը շուտով ներկայացաւ:

Օր մը, շահագործելով իր տէրոջը բացակայութիւնը, իր պզտիկ սրունքներով վազեց հեւի հեւ և խոշոր անտառի մը մէջ պահուցեցաւ, առանց կարելի հետեւանքներու վրայ մտածելու: Յետոյ սկսաւ քալել, վազեց ամբողջ օր մը, ամբողջ երկու օր, ամբողջ օրեր՝ անցնելով շատ մը արգելքներէ և վտանգաւոր փուշերու ու թուփերու մէջէն:

Ո՞վ կրնայ ըսել թէ որչափ ճամբայ կտրեց, քանի՞ անգամ մահուան վտանգներէ անցաւ, միայն մէկ բան որոշ է որ աստուածային նախախնամութիւնը, որ կը կերակրէ ճնշողութիւնները, պահեց և կերակրեց նաև այս պզտիկ սեւամորթը: Միեւնոյն զօրութիւնը, որ ժամանակաւ առաջնորդեց մոգերուն դէպի Բեթլեհեմ տանող ճամբան, ճամբան որ նաև դէպի Յիսուս կ'առաջնորդէր:

Ծովեզերքին կողմը հասնելէ վերջ, շուտով յաջողեցաւ գործ մը գտնել, սուրճի մշակոյթի ազարակի մը մէջ, որով կրցաւ իր կերակուրը ճարել և իբրեւ հագուստ դենջակ մըն ալ հագնիլ: Ասկէ վերջն է որ կը սկսի Սամուէլ Մորիսի հոգեկան ասպարէզը, խիստ հիանալի պատմութիւն մը, որուն նման ուրիշ մը չեմ գիտեր: Իր պատմութիւնը եղաւ կարճ, խոնարհ, ճշմարիտ, բայց նաև վսեմ իր պարզութեանը մէջ: Մշակոյթի ազարակին մէջ, ուր աշխատեցաւ Սամուէլ, պատեհութիւնն ունեցաւ ճանչնալու պատանի գործաւոր մը իրեն տարեկից և իր ցեղէն, որ քրիստոնեայ եղած էր միսիոնարներու քարոզութեամբ: Ասիկա իրեն խօսեցաւ Յիսուսի վրայով եւ կիրակի օրն ալ տարաւ հեղեղեցի, բայց ափսոս, Սամուէլ անգլերէն բառ մը իսկ չէր հասկնար: Միւս կողմէն, ինք որեւէ պզտիկ գաղափար մը չունենալով՝ չէր ըմբռնիր Սուրբ Գիրքին, եկեղեցիին, միսիոնարի մը և առանց նման ուրիշ բաներու ինչ ըլլալը, որոնք սակայն խորապէս կը յուզէին գինքը: Մէկ կէտի վրայ միայն իր միտքը հաստատուած էր, թէ Աստուած ամէն տեղ կը բնակի և թէ այս Սուրբ և բարձր էակին ներկայութեանը մէջ, ինք — խեղճ սեւամորթը — մեղաւոր, դատապարտուած ու կորսուած մէկ մըն է: Սամուէլին մէջ առաջին գործը կատարուած էր. անոր հոգին տխուր էր և ներքնապէս մտազբաղ վիճակ մը ունէր. կը նմանէր ճշմարտութիւնը փնտռող Եթովպիացի ներքինին,

որուն Փիլիպպոս մը պէտք եղաւ որ առաջնորդէր զայն ճշմարիտ ճամբուն մէջ:

Անգամ մը լսեց որ իր ընկերը կ'աղօթէր, հարցուց թէ ի՞նչ կ'ընէր այդպէս: Իր ընկերը պատասխանեց — «Աստուծոյ կը խօսիմ»: Ո՞վ է Աստուած շարունակեց Սամուէլը:

Աստուած իմ հայրս է ըսաւ ան: Ուրեմն, «Դուն քու հօրդ հետ կը խօսիս» շեշտեց Սամուէլ, իր սովորական պարզ և անկեղծ խօսքերովը:

Այս օրէն ի վեր, Սամուէլ աղօթքը կ'անուանէր «Խօսակցութիւն մը Հօրը հետ» և երբ կը սկսէր զգալ թէ ինք մեծ մեղաւոր մըն է, կը կանչէր իր ընկերն ալ միասին «Խօսելու Իր Հօրը հետ»: Իրեն համար, մեղքի զգացումը յարեւանցի և ընդհատուած զգացում մը չէր, հապաորոշ կը զանազանուէր ուրիշ շատ մը անուանական քրիստոնեաներու զգացումներէն: Քանզի այս զգացումը ցաւ մը, անձկութիւն մըն էր այս սեւամորթին մէջ, որ զինքը չէր լքէր, նման այն ցաւին և այն անձկութեան, որ ընդհանրապէս ունեցած են ապաշխարող հոգեւոր մեծ անձնաւորութիւնները:

Ամէն գիշեր կայարանին վրայ կը լսուէին Սամուէլին աղօթքները, երբեմն հառաչանքներով և երբեմն հեծեծանքներով:

Իր ընկերներուն քունը բոլորովին խանգարուած էր, այնպէս որ օրին մէկը ըսուեցաւ իրեն թէ՛ եթէ հանգարտ չկենայ, պիտի ստիպուի կայարանը ձգել: Սամուէլ մտիկ ըրաւ և սակէ վերջ երբ կ'ուզէր «խօսիլ իր Հօրը», կ'երթար մեծ անտառը, ուր որեւէ մէկը չէր լսեր զինքը. հոս է որ Սամուէլ ամբողջ գիշերներ անցուց, Փանուէլի մէջ հրեշտակին հետ կոռուղ Յակոբին նման, կոռուղով ու գօտեմարտելով Անտեսանելիին հետ:

Գիշեր մը, երբ երկար ատեն ծունկի վրայ կեցած էր, հիւանդ, ճնշուած, յոգնած, խորտակուած վիճակով, իր պարզուկ խրճիթը մտաւ և փորձեց քիչ մը քնանալ, բայց չկրցաւ: Յանկարծ իր խրճիթը անուշ լոյս մը ողողեց, խորհեցաւ թէ արեւը ելլելու վայրկեանն է, սակայն դուրսը մութ խաւար գիշեր էր և իր ընկերներն ալ խոր քունի մէջ լքնկղմած կը քնանային: Լոյսը հետզհետէ աւելի պայծառացաւ և խեղճ պղտիկ խրճիթը ամբողջութեամբ փառաւոր, պայծառ և լուսարձակ քնակարանի մը փոխուեցաւ: Այս վայրկեանիս Սամուէլ զգաց որ իր հոգեւոյն վրայէն բեռ մը ինկաւ. իր ամբողջ էութեամբ կը սարսուռ, բերկրանքով, իր մարմինը իրեն շիւղի մը պէս թեթեւ կ'երեւէր: «Կարծես պիտի թռչէի» կը պատմէր:

Այսպէս սկսաւ պարել և ցատքել տաճարին «գեղեցիկ» դուռը նստող անդամալոյծին պէս. իր ուրախութիւնը այնքան ուժգին էր որ չկրցաւ դիմանալ ազարակին մէջի մարդիկը արթնցնելու բաղձանքին, իր այս յաղթութիւնը ծանուցանելու անոնց ալ, այնպէս որ այն գիշերը որեւէ մէկը չկրցաւ քնանալ: Ոմանք խորհեցան թէ Սամուէլ խենթեցեր է, ուրիշներ ըսին թէ դեռ մը մտեր է անոր մէջը:

(Շար.)

(Թրգմ. Ֆրանսերէնէ)

Գ. ՊԱՐՍԱՄԵԱՆ



ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Եկո՛ւր Յիսուս սրտիս մէջ

Բընակէ սիրովդ անշէջ.

Հոն միշտ տեղ կայ քեզ համար

Լա՛յն, Լա՛յն, ո՛հ մի՛ ուշանար:

Յիսու՛ս, տուր որ ես ըլլամ

Բարի տղայ մ'աննման,

Ինչպէս վայել է քեզի

Յարող ամէն պատիկի:

Բարի Յիսուս, զիս պահէ

Ծածուկ ամէն մեղքերէ,

Օգնէ՛ ինձ որ փորձութեան

Մէջ միշտ ելլեմ յաղթական:

Արեամբդ լուայ սիրտս անարդ

Որ ունենամ անբիծ վարք,

Եւ փայլուն՝ քան աստղերէն

Ըլլամ Յիսուս, ո՛հ, ամէն:

Պ. Այրէս

ՍԻՍԱԿ ԴԱԼԱՅՃԵԱՆ

Դուք մարդկային էակներդ, խիստ քիչի կը փափաքիք, կրնայիք շատ ստանալ, ամբողջ աշխարհէն անհունապէս աւելին: Յիսուս Գրիստոս ինքզինքը կ'ուզէ ձեզի տալ. Անով դուք հազարաւոր աշխարհներէ աւելին, երկնից երկինքէն աւելին ունիք:

Լուսեր



ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԻ գործակատարը Իսփահանէն կը տեղեկացնէ որ Իրանի մէջ Ս. Գրքի սպառումը անցեալ տարիէն 2000 օրինակ աւելի եղած է: Գրածախներուն ծախածը 40.000ի հասած է:

Ս. ԳՐԲԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ միջոցաւ տարածուած տասնըմէկուկէս միլիոն հատորներէն եօթ ու կէս միլիոնը 989 գրածախներու միջոցաւ ծախուած են, միջին հաշուով իւրաքանչիւրը 7.500 հատոր ծախած է յաճախ շատ դժուար պարագաներու տակ:

ՍԱՄԱՐԻՍԻ մէջ Չէրզի նոր «Կասիլը Միշըն» մը բացուած է ծովափը, ծովեզերքի ժողովներուն համար շատ օգտակար պիտի ըլլայ:

ԻՆԻՍՈՒՆ տարեկան Միսիս Հարիէթ Էպլանտ (Սմըսթոն Սվանսոմպ) մեթոտական եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցին ուսուցիչը և Երիտասարդաց Ընկերութեան առաջնորդն է:

ԱՇԽԱՐՀԻ հինգ միլիոն բորոտներէն մօտաւորապէս կէսը Բրիտանական կայսրութեան մէջ կը գտնուի: «Բորոտներու միսիոնը» 10,000 բորոտ քրիստոնեաներու համար աղօթք կը խնդրէ ինչպէս նաեւ մանուկ բորոտներու գործածուող դարմանումներուն արդիւնաւորութեան համար:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ Ս. Գրքի Ընկերութիւնը Ճաբոնի քարտուղարէն տեղեկութիւն ստացած է որ Ս. Գրքի տարածումը աւելցած է:

«ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՕՐԸ ՅԱՐԳԵԼՈՒ» Ընկերութիւնը կը տեղեկացնէ որ հասարակաց պարտէզներու մէջ կիրակնօրեայ խաղերը մերժուած են Մանչէսթըրի, Լիվըրփուլի, Պրընչէրի, Շրէվուլքի և Տօրչէսթըրի ասեաններէն: Չէլսիֆորտ ալ որոշում տուած է կիրակնօրեայ խաղերու դէմ:

ՀԱՐՎԸՐՏԻ Դիտանոցին տնօրէնը Տօգ. Հարլուվ Շէփլի հարաւային երկնակամարին մէջ աստղերու հսկայ ողկոյզի մը գիւտը կը ծանուցանէ որ ոչ մի ծանօթ «Դոգմիք սիսթէմ»ներու կարգին չի պատկանիր: Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, ու երկնից հաստատութիւն: Անոր ձե-

ռացը գործերը կը ցուցնէ: Օրը օրին կը յայտնէ խօսքը, ու զիշերը գիշերին կը ցուցնէ գիտութիւնը»: Սաղ. 19 : 1, 2:

ՀԵՂԿԱՍՏԱՆԻ բնակչութեան երեք քառորդը գիւղերու մէջ կ'ապրին: Հոն 700.000էն պակաս գիւղ չկայ: Աւետարանը ասոնցմէ մօտաւորապէս 100.000ին մէջ քարոզուած է, կը մնայ 600.000ի չափ գիւղեր որոնց տակաւին չեն հասած: Գասերէն դուրս եղող հնդկներէն շատ մը քրիստոնեայ եղողներ կան, ամիսը 15.000 կը հաշուելի քրիստոնեայ եղողներուն թիւը, բայց 60 միլիոնի բաղդատմամբ ասիկա տակաւին շատ քիչ է: Այս տեղեկութիւնները տրուած են «Փոլնա Էնտինտէն Վիլէյճ Միշըն»ի տարեկան ժողովին մէջ: Կ'աւելցուի նաեւ թէ «Դեկտ. և Յունուար ամիսներուն 48 գիւղերու հասանք, բայց մենք չէինք կրնար կենալ ժողովուրդին սորվեցնելու»: Այս 48 գիւղերը կարելի է Աստուծոյ խօսքը կրկին լսելու պատեհութիւնը պիտի չունենան տարիներով: Ոմանք ութը տարի առաջ լսած էին և միսիոնարներու երկրորդ այցելութեան պատեհութիւնը ունեցած չէին մինչեւ այս տարի: Փալթան քաղաքին մէջ որ 70,000 բնակչութիւն ունի, մեր շուրջը 90 գիւղեր ունինք եւ ուրիշ շրջանի մը մէջ 500 գիւղեր որոնց մեր երիտասարդներէն երկուքը գացած են: Բայց այնքան շատ գիւղեր կան որոնց մէկը հասած չէ, քանզի պէտք եղածին չափ միսիոնարներ կամ հնդկ օգնականներ չկան: «Ուստի հունձքին Տէրոջը աղօթեցէք որ մշակներ հանէ իր հունձքին»:



ԱՆԳԼԵՐԷՆ Ս. Գրքի իբրեւ «Բաց Գիրք» չորսհարիւրամեակին առթիւ ժողովուրդին հետաքրքրութեանը համար «Լոնտօն Էնտ Նօթիս Իոթըրն Բէյլուէյ» շոգեկառքի ընկերութիւնը համաձայնած է իր սպասման սրահներէն մէկը բոլորովին զարդարելու Ս. Գրային պատկերներով, որոնք առաջին պատեհութեամբ պիտի կախուին Լինզօլնի ամենազլխաւոր սրահներէն մէկուն մէջ և ժամանակ մը յետոյ պիտի շրջի ուրիշ կայարաններ ալ:

Հաուզ ավ Գամընզի բանախօսը Գէփթըն Ի. Է. Ֆիձ Բօյ իր առաջին դասը պիտի կարդայ Սէն Բու Մայր Եկեղեցւոյ մէջ, Յունիս 17 Ուրբաթ օրը, ազգային շնորհակալութեան (thanksgiving) ժողովին առթիւ, Անգլիոյ մէջ «Բաց Ս. Գիրք»ին համար:

«Բրիսչըն Հէրըլտ»

ՔԻՉ ՄԸՆ ԱԼ

(Դերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.)



1. Դեռ աշխատանք քիչ մ'ալ ճիգ եւ հառաչ,
Դեռ քիչ մ'ալ ցաւ, արցունք, սակաւն յառաջ.
Ձի երջանիկ յոյս, կեանք ու յաղթութիւն
Բնաւ չեն հեռուն ինձմէ, ի՞նչ մեծ ցընծում:
2. Օրերն կ'անցնին արագ՝ ժամերն թռչին
Քիչ վերջ ձայնեմ վերերն երգն իմ Փրկչին:
Որպէս Իր Սուրբ արեամբ զնուած անդամ,
Երգեմ ընդմիշտ, ո՛հ, Իր փառքն յաղթական:
3. Քիչ վերջ դռներն պիտ' զբաղմունք վախճան:
Հետեւեմ ես ալ խումբին յաղթական,
Երբ հայրենիքս հասնիմ, զիս պիտ' Իր գահն
Նըստեցնէ Տէրս: Ի՞նչ երջանիկ վայրկեան:



Փետրուարի թիւին մէջ խնդրած էինք մեր սիրելի «Բանբեր»-ի ընտանիքէն ջանք մը աւելի ընել, որպէս զի այս տարի 200 օրինակ աւելի տպուած «Բանբեր»ները տեղաւորուին: Շնորհակալ ենք անունցմէ, որոնք այս մասին մեզի աջակից եղան: Դեռ 70 նոր բաժանորդներու պէտք ունինք: Որո՞նք կ'ուզեն աջակցիլ մեզի: Կանխաւ շնորհակալութիւն:

Յ. Ն. Ղ.





ՀՈՔ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԵՅԼԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ԵՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Քաղաք. 2, rue Philippe-de-Girard
Քարոզաժողով. ժամը 10ին
Աղօթաժողով. ժամը 11.30ին

Ս. ԺԻԻԼԻԵՆ. 55, boulevard de la Figone
Աստարանչական ժողով ժամը 16ին

ՍԷՆ ԼՈՒԻ. 11, Impasse des Muriers
Սուրբ Դրական սերտողութիւն ժամը 10.30ին
Քարոզաժողով ժամը 14.30ին

Ս. ԱՆԹՈՒԱՆ. 85, route Nationale
Աստարանչական ժողով ժամը 14.30ին

ՍԷՆ ԼՈՒ. 21, boulevard Escalon
Սուրբ Դրական սերտողութիւն ժամը 10.30ին
Քարոզաժողով. ժամը 15.30ին

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ. Villa Seferi մեր սրահին մէջ
Աստարանչական ժողով ժամը 14ին

Աստարանչական ժողովներ

ԿԱՐՏԱՆ. Յակոբեան տան մէջ ժամը 14.30ին
ԼԱ ՍԻՌԹԱ. Ֆրանս Աւետ. եկեղեցւոյ սրահը ժամը 14.30ին
ԷՔՍ. Ֆրանս. Ե. Ք. Բ.ի սրահը ժամը 14ին

.....

բ. ՇԱՔԱԹԱՄԷՋԻ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Չորեքշաբթի — ՍԷՆ ԺԻԼԻԵՆ ժամը 14.30ին
ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ » 14.30ին
Քաղաքը » 20ին
ՍԷՆ ԼՈՒ » 20ին
ՍԷՆ ԼՈՒԻ » 20ին
Հինգշաբթի — ՍԷՆ ԺԵՆՈՒՄ » 19ին
Ուրբաթ — ՍԷՆ ԱՆԹՈՒԱՆ » 14ին

.....

գ. ԵՐԻՏԱՍՍԱՐԴԱՅ Ե. Ք. Ը.

Քաղաք. երկուշաբթի ժամը 20ին
ՍԷՆ ԼՈՒ. Հինգշաբթի » 20ին

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

Քաղաքը	ժամը	8.30ին
Ս. ԼՈՒ.	»	8.30ին
ԼԷՎ ՕԼԻՎ	»	9ին
Ս. ԼՈՒԻ	»	9ին
Ս. ՄԱՐԿՐԻԹ	»	9ին
Ս. ԱՆԹՈՒԱՆ	»	14.30ին
ՍԷՆ ԺԻԼԻԵՆ	»	14.30ին
Ս. ԺԵՆՈՒՄ	»	14.30ին
ՍԷՆ ՄԻԹՐ	»	14.30ին
ԱԼՓ	»	14.30ին

.....

բ. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Տեղի կուսենան վերոյիշեալ տեղերու մէջ՝
շաբաթամէջի կէս օրէ վերջերը ժամը 4.30ին
սկսեալ եւ Հինգշաբթի ամբողջ օրը, ի բաց
առեալ կարտան, ՍԷՆ ՄԻԹՐ եւ ՍԷՆ ԺԵՆՈՒՄ:

Պաշտօնեաներ եւ անոնց հասցէները

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ՕՐ. ԵՍԹԵՐ ՏԻՄԻՐՃԵԱՆ

ԿԻՐԻԼՇԱՆ ԵՂՔ. ՊԱՏԱՔԵԱՆ

7, rue Papère MARSEILLE (B.-du-Rh.)
(Téléphone Colbert 03-97)

Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ, 21, boul. Escalon
St-LOUP-MARSEILLE (B.-du-Rh.)

Պատ. ՍԱՄՈՒԷԼ, 11, Impasse des Muriers
St-LOUIS-MARSEILLE (B.-du-Rh.)

